ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ

Մայիս, № 3 (158), 2002թ.

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, որը նվիրված էր ԳԱԱ 2001 թվականի գործունեության արդյունքներին, տեղի ունեցավ 2002 թվականի ապրիլի 29 – 30-ին: Ապրիլի 29-ին կայացան ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, բնական գիտությունների և հումանիտար գիտությունների բաժանմունքների հաշվետու-ընտրական ժողովները, որտեղ համապատասխանաբար հաշվետվություններ տվեցին բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ *Յու. Շուքուրյանը, Է.Գաբրիելյանը և Գ.Բրուտյանը:*

Ապրիլի 30-ին, ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը:

Ներածական խոսքով ժողովը բացեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս *Ֆ.Տ.Սարգսյանը:* (Հրապարակվում է թերթի այսօրվա համարում):

Ժողովը մեկ րոպե լռությամբ հարգեց ՀՀ ԳԱԱ անդամ, նշանավոր գիտնականներ Հրանտ Թամրազյանի, Լևոն Մկրտչյանի, Հովհաննես Բակլավաջյանի, Լեոնիդ Հակոբյանի հիշատակը:

«ՀՀ ԳԱԱ 2001թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների» մասին զեկուցեց ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս *Վ.Բ.Բարխուդարյանը:* (Զեկուցման շարադրանքը հրապարակվում է թերթի այսօրվա համարում):

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին Ամենայն հայոց կաթողիկոս *Գարեգին Երկրորդը,* նախարարներ՝ *Հ.Աբրահամյանը, Գ.Ճշմարիտյանը, Լ.Մկրտչյանը,* ՀՀ ԳԱԱ համակարգի բաժանմունքների գիտնականներ *Դ.Սեդրակյանը, Յու.Ալեքսանյանը, Կ.Ղարագյոզյանը, Ա.Գևորգյանը, Ա.Եղիազարյանը, Ռ.Ղազարյանը և Հր.Սիմոնյանը,* որոնք անդրադարձան գիտական աշխատանքի կազմակերպման, իշխանություն-գիտություն փոխհարաբերության, գիտնականի աշխատանքի գնահատման տարբեր հարցերին:

ՀՀ ԳԱԱ և Կրթամշակութային միջազգային ծրագրերի փոխանակման ընկերակցության մրցանակներով ու դիպլոմներով պարգևատրվեցին ակադեմիայի հումանիտար գիտությունների մի խումբ երիտասարդ գիտնականներ: Մրցանակները հանձնեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս *Ֆ.Սարգսյանը:*

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտներ ընտրեց *Է.Գաբրիելյանին* և *Յու. Շուքուրյանին,* բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ ընտրվեցին *Էդ.Ղազարյանը* (ֆիզմաթ. և տեխ. գիտություններ), *Ա.Շահինյանը* (բնական գիտություններ) և *Հ.Ավետիսյանը* (հումանիտար գիտություններ):

ԱԿԱԴԵՄԻԱՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱԱ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ֆ.Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Մեծարգո գործընկերներ, մեծարգո հյուրեր:

Ամփոփելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հաշվետու տարվա գործունեության արդյունքները, պետք է նշել, որ Ակադեմիայի համակարգը, չնայած շարունակվող ծանր նյութական պայմաններին, գիտական հետազոտությունների ասպարեզում հասել է դրական որոշ տեղաշարժերի: Մեր գիտնականների ջանքերը նպատակաուղղված են եղել հստակ ուրվագծել գիտության զարգացման այն հիմնական ուղղությունները, որոնք բխում են մեր երկրի տնտեսական զարգացման և ազգային անվտանգության շահերից, ինչպես նաև մեր գիտության հետագա զարգացման հնարավորություններից: Մեր առջև ծառացած հիմնական խնդիրը մեր գիտական ներուժի և կոլեկտիվների ծեռքբերումների պահպանումն է եղել:

ԳԱԱ-ի ինստիտուտների կողմից մշակված նոր տեխնոլոգիաները հնարավորություններ են ստեղծում թողարկել արդյունաբերական և գյուղատնտեսական որոշ ապրանքներ, որոնք կարող են նշանակալի արդյունք ունենալ ժողովրդական տնտեսության բնագավառում: Մշակված են տեխնոլոգիաներ, որոնք ստացել են ներդրման լիցենզիաներ: Այդ մասին զեկուցվեց բաժանմունքների ընդհանուր ժողովներում և կզեկուցվի այստեղ:

Սակայն ցավով պետք է նշեմ, որ, ինչպես նախկինում, դժբախտաբար այսօր էլ մեր գիտնականների մշակումները դեռևս շատ քիչ կիրառում են գտնում մեզ մոտ՝ հանրապետությունում: Հաճախ մենք հանդիպում ենք արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների հետ, պայմանավորվածություններ ենք ձեռքբերում, բայց միշտ չէ, որ մեր առաջարկները իրականանում են: Սա շատ կարևոր խնդիր է, և այստեղ մեծ աշխատանքներ ունենք կատարելու և՝ մենք՝ գիտության բնագավառի աշխատողներս, և նրանք՝ գործարար աշխարհի ներկայացուցիչները: Պետք է նշել, որ արդեն կան որոշ տեղաշարժեր և մենք հույս ունենք, որ այս համագործակցությունը ի վերջո կզարգանա: Մենք շատ լավ ենք հասկանում, որ արդյունաբերության, գյուղատնտեսության, սոցիալական ոլորտի վերականգնման և զարգացման հետ զուգընթաց կաճի նաև պահանջը դեպի գիտությունը և գիտական ներդրումները:

Զարգացել է տարբեր երկրների, և առաջին հերթին Ռուսաստանի Դաշնության, գիտական օջախների հետ կապը, ինչն օժանդակում է Հայաստանի գիտության բարձր մակարդակի պահպանմանը, նրա միջազգային ճանաչմանը: Զգալի են կնքված պայմանագրերի, դրամաշնորհների, հովանավորների, հիմնադրամների ներդրումները գիտության ֆինանսավորման ասպարեզում:

Սակայն մեր գիտնականները հստակ պատկերացնում են, որ մեր խնդիրը միայն երկար տարիների ընթացքում ձեռք բերածի «մի կերպ» պահպանելը չէ: Գիտահետազոտական ինստիտուտները պետք է ավելի լորջ, և Հանրապետության զարգացման հեռանկարները հաշվի առնելով, մոտենան գիտական ուղղությունների և թեմաների ընտրության խնդրին:

Կասկած չկա, որ առաջիկայում մեր Հանրապետության համար առաջնահերթ պետք է համարվեն ինչպես մեր երկրի պաշտպանության խնդիրների, բարձր տեխնոլոգիաների, էներգիայի և վառելիքի նոր աղբյուրների, հանքահումքային պաշարների հետազոտման աշխատանքները և այս ուղղությունների զարգացման հենքի վրա նոր աշխատատեղերի ստեղծման, նոր նյութերի, շրջակա միջավայրի պահպանման, կենսատեխնոլոգիայի, ժառանգական հիվանդությունների, հայագիտության և հասարակական մյուս գիտությունների ուղղությամբ տարվող հետազոտությունների առաջնությունը:

Ես հատուկ պետք է նշեմ Սևանի պրոբլեմի հետ կապված աշխատանքների կարևորությունը, որոնք պետք է առաջնային լինեն Ակադեմիայի համար: Նկատի ունենալով նաև, որ վերջերս ընդունված Օրենքով այդ պարտավորությունը դրված է Ակադեմիայի վրա:

ՀՀ ԳԱԱ-ի և այլ շահագրգիռ գիտական կազմակերպությունները պետք է կարևոր քայլեր անեն ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ, որը ՀՀ կառավարության կողմից իրավամբ ճանաչվել է տնտեսության զարգացման կարևորագույն ճյուղ:

Գիտության արդյունավետ զարգացումը, ինչպես և ամեն մի մտավոր ստեղծագործական պրոցես պահանջում է այդ զարգացմանը նպաստող պայմաններ՝ նյութական ապահովվածություն և պետական հովանավորություն: Գիտությունը չի կարելի վարչական սկզբունքներով կառավարել: Վարչական լծակները պետք է ի սպաս դնել գիտության առջև կանգնած խնդիրների լուծման, գիտության հովանավորման և խրախուսման համար: Այդպես է վիճակը բոլոր քաղաքակիրթ երկրներում: Այդպես պետք է լինի նաև մեր երկրում: Ավելորդ է այստեղ կրկին ապացուցել բազմիցս արդեն ապացուցված ճշմարտությունը, որ առանց գիտության չի կարող լինել պետություն և, որ առանց գիտության չի կարող զարգանալ հասարակությունը:

Մենք հարկադրված ենք մեկ անգամ ևս ընդգծել, որ, ցավոք, մեր երկրում գիտության հեղինակությունը չի գտնվում արժանավայել հարգանքի բարձրության վրա, չնայած մենք ունենք պատկառելի գիտական ներուժ, որը պատիվ կբերի ոչ քիչ թվով զարգացած երկրների:

Կա մի դատապարտելի սովորույթ՝ պարծենալ պատմական անցյալով ու նրա գործիչներով և անտեսել, անգամ ծգտել սևացնել ներկան: Բայց մենք երբեք չպետք է մոռանանք, որ գիտական ներուժը դա մեր ազգային հարստությունն է, որը մենք սրբորեն պետք է պահպանենք և զարգացնենք: Մենք համոզմունք ենք հայտնում, որ մեր պետությունը նորովի կմոտենա մեր երկրում գիտության զարգացման խնդիրներին:

Հայաստանի անկախացումից հետո, թվում էր, թե պետք է պահպանվեին ժամանակակից տնտեսության զարգացման, տասնամյակների ընթացքում ձևավորված և իրեն հիմնականում արդարացրած, սկզբունքները և դրանց հիմքում ընկած գիտական նվաճումները:

Իրադրության այսօրինակ շրջադարձի հետևանքը եղավ այն, որ շատ գիտնականներ լքեցին հայրենիքը, օտարության մեջ փնտրելով իրենց տաղանդի դրսևորման, գիտելիքների օգտագործման և աշխատանքի գնահատման առավել նախընտրելի պայմաններ: Նրանց մի մասն էլ, թեև մնալով հայրենիքում, ստիպված եղավ փոխել իր աշխատանքի բնույթը: Այլ երկրներ մեկնածների թվում քիչ չեն այնպիսիները, որոնք այժմ արդեն զգալի ներդրում ունեն այդ երկրներում գիտության զարգացման մեջ: Միևնույն ժամանակ, հեռացած գիտնականների մի զգալի մասը, հասնելով մասնագիտական բարձր մակարդակի, դեռևս շա-

(Տես 2-րդ էջը)

ՄԱՅԻՍ, 2002

Սովորաբար ասում ենք՝ մայիս, կարմիր ամիս... Ասում էինք՝ դրոշների, պաստառների առատության իմաստով, քանզի անցած տասնամյակներում պաստառները միայն կարմիր էին: Բայց ոչ... Ժողովուրդը սիրում է մայիսը, քանզի այդ ամսում է բացվում վարդը, այդ ամսին է դաշտերում կարմրին տալիս ալ կակաչը: Մայիսը մեզ համար ուրիշ խորհուրդ էլ ունի, գուցե և հիմնական իմաստ. մայիսին՝ Ավարայր, մայիսին՝ Սարդարապատ ու Ապարան, մայիսին՝ հաղթանակ ֆաշիզմի դեմ, մայիսին՝ Հայոց առաջին հանրապետության հռչակում: Ու այդ հաղթանակների պատվին է, գուցե, կարմիր ծաղկահանդես սկսվում Հայոց լեռնաշխարհում:

Պատմական այս մեծ շքահանդեսի ամենավերջին հաղթանակը գրվեց Շուշիում, որի ազատագրումը ազերիներից, ասես վերջակետ դրեց Արցախյան հերոսամարտին: Մեր ժողովուրդը իր սրտում վառ է պահում նրանց հիշատակը, ով կռվեց, ով նաև զոհվեց հայ ազգի գոյապայքարում, հերոսական ոսկե տառերով գրեց հայոց պայքարի մատյանի ամեն մի էջ:

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ԱԿԱԴԵՄԻԱՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱԱ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ֆ.Տ.ՄԱՐԳՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րունակում է պահպանել կապը հայրենիքի գիտական կենտրոնների հետ, ջանալով հնարավորին չափ իր նպաստը բերել նրանցում կատարվող աշխատանքներին:

Այս իրադրության պայմաններում կենսականորեն անհրաժեշտ է գիտատեխնիկական քաղաքականության այնպիսի սկզբունքների որդեգրումը, որոնք առաջին հերթին կկարողանան նպաստել Հայաստանի գիտական համակարգի ներուժի պահպանմանը, ինչպես նաև թույլ կտան ճիշտ գնահատել այն և օգտագործել նրա գործունեության արդյունքները ինչպես տնտեսության զարգացման մեջ, այնպես էլ «արտահանման» բնագավառում, գտնել կրթական, մշակութային և սոցիալական համակարգերում դրանց առավել ակտիվ ներգրավելու ուղիները: Այս դեպքում կարելի է վստահ լինել, որ մոտ ապագայում հնարավոր կդառնա նաև արտասահման մեկնած որոշ գիտնականների վերադարձը հայրենիք:

Ելնելով այս սկզբունքից, անհրաժեշտ է նախ պարզել հիմնարար գիտության մեջ առկա գիտական ներուժի որակն ու հնարավորությունները, շեշտը դնելով մեր հանրապետության գերակա և առավել զարգացած գիտական ուղղությունների վրա և ապա անդրադառնալ գիտատեխնիկական արդյունքների օգտագործման նպատակով առաջարկությունների ձևավորմանը:

Առաջին հերթին անհրաժեշտ է ստեղծել համապատասխան օրենսդրական և իրավական դաշտ և օգտագործել դաշտի ընձեռած հնարավորությունները:

Գիտատեխնիկական քաղաքականության օրենսդրական դաշտի ձևավորման հետ կապված առաջին լուրջ քայլը արվեց 1993թ. մարտի 9-ի «ՀՀ գիտությունների ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով, որով հաստատվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տեղն ու դերը Հայաստանի կյանքում: Միայն 7 տարի անց, արդեն օրենքով, ամրագրվեց գիտության գերակայությունը Հայաստանի կայացման և զարգացման գործում:

2000թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքով գիտության բնագավառում ունեցած ձեռքբերումները պահպանելու և հետագայում զարգացնելու խնդիրները ամրագրվեցին որպես Հայաստանի Հանրապետության անկախության և ազգային անվտանգության ամրացման կարևորագույն գործոններ:

Եթե խորհրդային շրջանում հայկական գիտության ծավալների գերակշիռ մասը կենտրոնացված էր գիտաարտադրական միավորումների, կամ առնվազն դրանց հետ միասին նույն նախարարությունների կազմում, ապա մի քանի տարի անց պատկերը լիովին այլ էր: Այժմ արդեն գիտական հետազոտությունների հիմնական մասը իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի ու Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ինստիտուտներում, ինչպես նաև բուհերում և փոքրաթիվ այլ ինստիտուտներում, որոնք զբաղվում են առավելապես հիմնարար հետազոտություններով:

Ընդունելով ՀՀ ԳԱԱ-ի դերն ու նշանակությունը այսօրվա գիտական համակարգում, օրենքով, գիտատեխնիկական քաղաքականության մշակման և իրականացման բնագավառում նրան վերապահվել է կարևոր դերակատարում՝

♦ այն Հայաստանի Հանրապետության գիտական բարձրագույն կենտրոնն է, որը համակարգում է հանրապետությունում (այդ թվում գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում) իրականացվող հիմնարար գիտական հետազոտությունները,

♦ Հայաստանի Հանրապետության գիտական քաղաքականության մշակման, իրականացման և գիտության կառավարման ոլորտում ունի հատուկ կարգավիճակ և պետության հետ ունեցած հարաբերություններում անմիջականորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ,

♦ հանդիսանում է կառավարության պաշտոնական գիտական խորհրդատուն, որի առաջարկները պարտադիր կարգով քննարկում են կառավարությունը և պետական կառավարման համապատասխան մարմինները,

♦ մասնակցում է Հայաստանի Հանրապետության գիտատեխնիկական քաղաքականության սկզբունքների մշակմանը և պետական գիտական ծրագրերի ստեղծմանը,

♦ մասնակցում է գիտահետազոտական ծրագրերի փորձաքննության սկզբունքների և մեթոդների մշակմանը, սահմանված կարգով իրականացնում է փորձաքննություն հիմնարար գիտությունների բնագավառում,

♦ իրականացնում է գիտական, կրթական և մշակութային ներդաշնակ համակարգի ձևավորման ու հանրապետության գիտական ներուժի զարգացմանն ուղղված՝ օրենսդրությամբ սահմանված գործունեություն:

Օրենքը նախատեսում է, որ ԳԱԱ-ի և նրա համակարգի կազմակերպությունների գույքը ենթակա չէ սեփականաշնորհման և իրենց իսկ չօգտագործվող գույքը վարձակալության հանձնվելու դեպքում ստացված գումարներն օգտագործվում են նրանց կանոնադրական խնդիրների իրականացման համար:

Նշելով օրենքով սահմանված դրույթների կարևորությունը, ցավով պետք է արձանագրել, որ դրանք դեռևս լիարժեքորեն չեն կատարվում: Թեև օրենքի ընդունումից հետո անցել է արդեն ավելի քան մեկ տարի, դեռևս չեն ձևավորվել ենթաօրենսդրական այնպիսի ակտեր ու որոշումներ, որոնք պետք է կոչված լինեին ապահովելու գիտական համակարգում ակնկալվող լուրջ դրական տեղաշարժեր: Դեռ ավելին, դրանց փոխարեն կյանքի են կոչվել օրենքի հիմնադրույթներին հակասող որոշ որոշումներ:

Օրենքի դրույթները նախ և առաջ առնչվում են գիտական համակարգի վերակառուցման խնդիրների հետ: Արդեն սովորույթ է դարձել, որ երբ անգամ գիտության հետ մոտավոր առնչություն ունեցող պաշտոնատար անձիք մեկնում են արտասահման, այնտեղից վերադառնալուց հետո հաճախ հանդես են գալիս գիտական համակարգի կառուցվածքը և գիտատեխնիկական քաղաքականությունը փոխելու առաջարկություններով, առանց հաշվի առնելու երկրի առանձնահատկությունները և այդ փոփոխությունների արժեքն ու հետևանքները: Այստեղ մեկ անգամ ևս պետք է հիշեցնել, որ օրենքը ստեղծվել է լուրջ քննարկումների արդյունքում և անհրաժեշտ է խստագույնս ապահովել նրա կիրառումը:

Ելնելով գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական ճիշտ քաղաքականության ձևավորման և իրականացման կարևորությունից և վերգերատեսչական շահերից, անհրաժեշտ է, որ իր գործունեությունը վերսկսի ՀՀ նախագահին առընթեր «Գիտական և գիտատեխնիկական քաղաքականության խորհուրդը»: Խորհուրդը պետք է իրականացնի գիտատեխնիկական քաղաքականության ոլորտում նախարարությունների և գերատեսչությունների կողմից կատարվող աշխատանքների համակարգումը, գիտության զարգացման հիմնական ուղղությունների քննարկումն ու հաստատումը, հաշվի առնելով հանրապետության տնտեսության հիմնախնդիրները, լուծի գիտության ֆինանսավորման դեռևս բաց հարցերը և, որ ամենակարևորն է, ձևավորի գիտատեխնիկական քաղաքականության սկզբունքները և ամրագրի գիտության որոշիչ դերը երկրի զարգացումն ապահովելու խնդրում: Խորհուրդը պետք է կազմված լինի հանրապետության ճանաչված գիտնականներից և այն գործիչներից, ովքեր լավ են պատկերացնում գիտության զարգացման հեռանկարները: Եվ, վերջապես, Խորհուրդը պետք է լուծի հիմնականում սկզբունքային հարցեր և այս պարագայում, ելնելով ԳԱԱ-ի օրենսդրական պարտավորություններից, նրա վրա կարող է դրվել Խորհրդի աշխատանքների իրականացնող-համակարգողի ֆունկցիաները:

Գիտատեխնիկական քաղաքականության հիմնական խնդիրներից է նաև ՀՀ ԳԱԱ-ում, բուհերում և ճյուղային նախարարությունների համակարգերում կուտակված գիտատեխնիկական ներուժի նպատակային և արդյունավետ օգտագործման կազմակերպումը:

Օրենքն, իհարկե, ամեն մի գիտնականի, կամ գիտնականների խմբի տալիս է հնարավորություն հանդես գալու առաջարկություններով գիտության ամենատարբեր ուղղություններով: Սակայն, միևնույն ժամանակ, ոլորտի գործունեությունը կարգավորելու համար ընդունված ենթաօրենսդրական փաստաթղթերով ձևականության է հասցված առաջատար գիտնականներից բաղկացած ԳԱԱ-ի պրոբլեմային գիտական խորհուրդների, ինչպես նաև գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների դերը գիտահետազոտական թեմաների և դրանք իրականացնող հետազոտական խմբերի ձևավորման հարցում:

Արդյունքում, շրջանցվում է օրենքի հիմնադրույթներից ևս մեկը, ըստ որի ՀՀ ԳԱԱ-ն համակարգում է գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարվող հիմնարար հետազոտությունները: Չեն լուծվում նաև գիտահետազոտական աշխատանքների արդյունքների, գիտության միասնականության տեսակետից գնահատման և դրանց հետագա ճակատագիրը որոշելու հարցերը:

Պարզ է, որ ոչ մի պետական մարմին չի կարող ավելի ճիշտ գնահատել հանրապետության մասշտաբով առաջարկվող հետազոտությունների և սպասվող արդյունքների կարևորությունը կամ դրանց իրականացման հնարավորությունները, քան ոլորտը կարգավորող ճյուղային նախարարությունները, ՀՀ ԳԱԱ-ն և համապատասխան ոլորտի գիտնականները: Ճյուղային նախարարություններն իրենք պետք է իրականացնեն իրենց ոլորտին առնչվող անհրաժեշտ նախագծերի ընտրությունը և հետևեն դրանց կատարմանը:

Այս առումով, նպատակահարմար է իրականացնել այնպիսի կառուցվածքային փոփոխություններ, որոնք առաջին հերթին նպաստեն՝ կամ կիրառական բնույթի ինստիտուտների միավորմանը համապատասխան արտադրական ձեռնարկությունների հետ, ստեղծելով ֆիրմաներ, կոնցեռններ, կամ էլ պայմանագրային հիմունքներով դրանց համագործակցությանը: Հիմնարար բնույթի հետազոտական աշխատանքները պետք է իրականացվեն ՀՀ ԳԱԱ-ի համապատասխան ինստիտուտների հետ համագործակցված: պետական գիտատեխնիկական քաղաքականության հիմնական խնդիրներից է գիտատեխնիկական գերակա կամ առավել կարևոր գիտական ուղղությունների սահմանումը, հատկապես հանրապետության տնտեսական, քաղաքական և սոցիալական փոփոխությունների ժամանակաշրջանում:

Գերակա ուղղությունների ձևավորման փուլում անհրաժեշտ է անպայման հաշվի առնել տվյալ պատմական պահին հասարակության մեջ այդ ուղղությունների բարձր վարկանիշը և, վերջապես, անհրաժեշտ է հիշել, որ դրանց հիման վրա է, որ պետք է ձևավորվեն գիտության պահպանման և զարգացման պետական ծրագրերը: Անհրաժեշտ է մտածել նաև գերակա ուղղությունների ֆինանսավորման հետ կապված հարցերի մասին:

Անդրադառնալով ֆինանսավորման խնդիրներին, պետք է նշել, որ օրենքով նախատեսված է գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման երեք ձև՝ բազային, նպատակային-ծրագրային և թեմատիկ: Սակայն, 2002 թվականի բյուջեում գիտության ֆինանսավորման կտրուկ կրճատման (3 անգամ) հետևանքով նախատեսվել է թեմատիկ ֆինանսավորման ակնհայտ գերակայությունը մյուս ձևերի նկատմամբ, որը հարուցում է մի շարք լուրջ խնդիրներ: Նախ, որ այն ի վիճակի չէ ապահովելու գիտական կազմակերպությունների պահպանումը և, որ ամենակարևորն է, զրկում է կոլեկտիվին ընդհանուր գիտական միջավայր ստեղծելու հնարավորությունից, հետազոտողին՝ աշխատանքի պայմաններից և նպաստում է գիտության մեջ բյուրոկրատական միջամտության աճին, գիտական հաստատությունների քայքայմանը, տրոհմանը և փոշիացմանը:

Չափազանց կարևոր է օրենքով նախատեսված ծրագրային-նպատակային ֆինանսավորման իրագործումը, քանի որ Հանրապետությունում գոյություն ունեն կարևորագույն հիմնախնդիրներ, որոնց լուծումը պահանջում է գիտական և այլ կոլեկտիվների համատեղ ջանքեր և նպատակային ֆինանսավորում: Դա առաջին հերթին վերաբերում է երկրի անվտանգությանը, հանքահումքային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, էներգիայի նոր աղբյուրների հայտնաբերմանը ու խնայողաբար օգտագործմանը և այլն:

Վերջապես օրենքը նախատեսում է նաև բազային ֆինանսավորում՝ գիտական կազմակերպությունները պահպանելու, սարքավորումներով, նյութերով, էլեկտրաէներգիայով ապահովելու, շենքերի կայունությունը և աշխատանքային պայմանները բարելավելու, ինչպես նաև պրոբլեմային և բազային աշխատանքներ իրականացնելու համար: Ֆինանսավորման այս ձևն է, որ պետք է օգնի հետազոտությունների համար կայուն պայմաններ ստեղծելուն և երիտասարդներին գիտության մեջ ներգրավելուն:

Ցավոք, 2002 թվականին հնարավոր չեղավ իրականացնել օրենքի այս կարևոր երկու դրույթները: Սակայն դժբախտությունը կայանում է հենց նրանում, որ անգամ ֆինանսական այս սուղ պայմաններում կարելի էր շատ բան անել այս ուղղությամբ, բայց չարվեց...

Ինչ վերաբերում է թեմատիկ ֆինանսավորմանը, ապա, ըստ մեզ, հարկ է, որ նախ այն սահմանափակվի հօգուտ ծրագրայինի ու բազայինի և ապա իրականացվի միայն ՀՀ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության կողմից՝ փորձագիտական հանձնաժողովների երաշխավորությամբ:

Ելնելով Օրենքի վերոհիշյալ դրույթներից, նպատակահարմար է ֆինանսավորման ձևերի միջև ընդունել հետևյալ համամասնությունը՝ բազային – 50 %, ծրագրային-ոչ պակաս քան 25 %, թեմատիկ-ոչ ավել քան 25 % (կախված ծրագրային ծավալների չափից):

Հարկ է նշել, որ ՀՀ ԳԱԱ-ի համակարգը նույնպես լուրջ բարեփոխումների անհրաժեշտություն է զգում: Դա առաջին հերթին վերաբերում է Ակադեմիայի նախագահությանը:

Մեր ընդհանուր ժողովի կողմից ընդունված ԳԱԱ-ի կանոնադրության մեջ Հանրապետության կառավարությունը սահմանափակել է փոխպրեզիդենտների թվաքանակը երեքով: Մեկ փոխպրեզիդենտ պետք է զբաղվի ընդհանուր հարցերով, մյուսը՝ աշխատանքների արդյունքների ներդրումով: ԳԱԱ-ի ակադեմիկոս-քարտուղարը, ինչպես նախկինում, պահպանում է վիցե-պրեզիդենտի կարգավիճակը և պետք է զբաղվի գիտակազմակերպչական հարցերով:

Վիցե-պրեզիդենտներն իրենց աշխատանքը չեն համատեղում բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարի պարտականությունների հետ:

Ելնելով այս դրույթներից, երեկ մենք ընտրեցինք երեք բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներ, այսօր էլ պետք է ընտրենք երկու փոխպրեզիդենտներ:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ԱԿԱԴԵՄԻԱՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱԱ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ֆ.Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Այդ բարեփոխումների անհրաժեշտությունը անմիջականորեն առնչվում է գիտատեխնիկական քաղաքականության այնպիսի կարևորագույն խնդիրներից մեկի հետ, ինչպիսին է գիտական արդյունքների ներդրումը կամ վաճառքը:

Ինչպես մեր, այնպես էլ արտերկրների փորձը ցույց է տալիս, որ առավել հաջողության կարող են հասնել այն հետազոտությունները, որոնցում աշխատանքի այս կամ այն փուլում ներգրավվում է պոտենցիալ ներդրողը և աշխատանքները ուղղում ներդրման համար ընդունելի և օպտիմալ ճանապարհով:

Այս է պատճառը, որ նախկինում ներդրման իմաստով առավել մեծ հաջողությունների են հասել հիմնականում այն գիտական ինստիտուտները, որոնք անմիջականորեն գործել են երկրի առաջատար և կարևորագույն արտադրական միավորումների համակարգում, ինչպես, օրինակ, Երևանի Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը կամ ճյուղային մի շարք այլ ինստիտուտներ: Այս տեսակետից որոշակի հաջողություններ են ունեցել նաև այն ակադեմիական և բուհական գիտական կազմակերպությունները, որոնք երկարատև պայմանագրային կապերի մեջ են եղել հզոր գիտաարտադրական միավորումների հետ: Այսօր արդեն, նոր պայմանների թելադրանքով, առաջին պլան է մղվում, կիրառության իմաստով հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների լիարժեք գովազդի, արտասահմանյան (ինչպես նաև հայրենական, եթե այդպիսիք լինեն) համապատասխան հզոր ֆիրմաների և միավորումների բացահայտման և դրանց հետաքրքրությունը դեպի այդ հետազոտությունների արդյունքները շարժելու աշխատանքների անհրաժեշտությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է բարձրացնել ԳԱԱ-ի ակադեմիկոս-քարտուղարի դերը ընդհանուր կազմակերպչական հարցերի լուծման մեջ, ապահովելով նրան ուժեղ գիտավերլուծական և գիտախորհրդատվական ծառայությամբ:

Պետք է, որ բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարները զբաղվեն հիմնականում իրենց Կանոնադրական ֆունկցիաներով և չհամատեղեն աշխատանքը ինստիտուտների տնօրենների պաշտոնների հետ:

Ստեղծված սոցիալ-տնտեսական նոր պայմաններում, նոր պրոբլեմների և խնդիրների առջև կանգնեցին գիտահետազոտական ինստիտուտները: Ընկնելով շուկայական հարաբերությունների հորձանուտի մեջ, նրանք կորցրեցին իրենց նախկին կողմնորոշիչները և, ցավոք, մինչև օրս չեն գտել նորերը: Այն ինչ հիմնականում տրվում էր ինստիտուտներին պատրաստի ձևով՝ ամրագրված և երաշխավորված աշխատավարձի ֆոնդ, անգամ անկախ կատարված գիտական հետազոտությունների արդյունքների կարևորությունից, երաշխավորված գումարներ սարքավորումների ձեռք բերման, գիտական գործողությունների և վերջապես, ինստիտուտների ենթակառույցների պահպանման և զարգացման համար, այժմ այլևս գոյություն չունի:

Խնդիրը բարդանում է նաև նրանով, որ պետությունը, հանդիսանալով բոլոր պետական գիտական կազմակերպությունների լիիրավ սեփականատերը, չի կատարում իր՝ սեփականատիրոջ պարտավորությունները: Դեռ ավելին, լինելով գլխավոր և հիմնական սեփականատեր, պետությունը մինչև օրս փորձ էլ չի անում առաջարկելու որևէ հայեցակարգ գիտական կազմակերպությունների հետագա ճակատագրի վերաբերյալ, պահելով դրանց մշտական և խորացող թքվածնային քաղցի պայմաններում: Այս իրավիճակում առավել արդիական է դառնում գիտական կազմակերպությունների կառավարման ժամանակակից մոտեցումների մշակումը:

Մեր խորը համոզմամբ, այսօր շատ սուր է դրված գիտական կազմակերպությունների համար մենեջմենթի կազմակերպման հարցը: Գիտահետազոտական ինստիտուտների ղեկավարման կամ կառավարման նախկին մեթոդները ներկա պայմաններում չեն կարող լինել արդյունավետ: Այսօր արդեն շատ ավելի մեծ ջանքեր, կազմակերպչական հնարքներ և նախաձեռնություն է պահանջվում ինստիտուտի արդյունավետ գործունեությունը կազմակերպելու համար, քան երբևէ, և այս առումով մենք պետք է լրջորեն զբաղվենք գիտական կազմակերպության մենեջմենթի ժամանակակից մեթոդների արմատավորման հարցերով: Մի բան պարզ է, չի կարելի այսօրվա պայմաններում ղեկավարվել կառավարման հին մեթոդներով և ձևերով:

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ նաև ընդհանրապես «գիտության ղեկավարման» հարցին, որ, ըստ էության, մի անիմաստ հասկացություն է: Անընդունելի է Գիտությունների ազգային ակադեմիայից բացի ունենալ ինչ-որ անհասկանալի «կառավարող» մարմին (լինի դա նախարարություն թե կոմիտե): Ինչպես չի կարելի վարչական եղանակներով ղեկավարել արվեստը և գրականությունը, այնպես էլ չի կարելի ղեկավարել գիտությունը: Պետական մարմինները կոչված են հովանավորելու, այլ ոչ թե վարչական մեթոդներով գիտությունը կառավարելու: Գիտության «կառավարման» ողբերգական հետևանքները արդեն բազմիցս ճաշակել ենք և հարկ չկա ևս մեկ անգամ այն փորձելու:

Իհարկե, ժամանակին գոյություն ուներ Խորհրդային Միության Գիտության և տեխնիկայի պետական կոմիտե, բայց նրա ֆունկցիաների մեջ ամենևին էլ չէր մտնում գիտությունների ակադեմիաների կամ այլ գիտական կազմակերպությունների «կառավարումը»: Նրա հիմնական խնդիրը արտասահմանյան երկրների հետ տարվող աշխատանքն էր: Երբեմն Կոմիտեն ձեռք էր բերում և նպատակային ձևով գիտական կազմակերպություններին էր հատկացնում լրացուցիչ ֆինանսական միջոցներ, կամ արտասահմանյան ժամանակակից սարքավորում (Հայաստանը նույնպես օգտվել է դրանցից) և պետք է նշել, որ նրա աշխատանքը շատ օգտակար էր, հատկապես, երբ Կոմիտեի նախագահը միաժամանակ և Գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտն էր, որը լավ պատկերացնում էր գիտության զարգացման հիմնախնդիրները: Սակայն, այդ հնարավորությունները, ինչպես նաև ավելորդ բյուրոկրատական ապարատ պահելու անհրաժեշտությունը այժմ մենք չունենք և, հետևաբար, նման մարմնի ստեղծումը դառնում է աննպատակահարմար, ավելին, այն կարող է վերածվել խանգարող ավելորդության:

Չի կարելի նաև գիտության «ղեկավարումը» հանձնել չինովնիկներին, մանավանդ այսօրվա պայմաններում: Գիտական համակարգը խորը և մտածված վերակառուցման կարիք է զգում: Անկասկած, յուրաքանչյուր ճյուղային նախարարություն ավելի լավ է պատկերացնում, թե տվյալ ուղղությունն ինչպես կարող է և պետք է զարգանա, հենվելով առկա գիտական ձեռքբերումների վրա, իսկ ինչ վերաբերում է ՀՀ ԳԱԱ-ին, նրա դերը միանշանակ նշված է Օրենքում:

Բերված դրույթների իրագործումը, մեր կարծիքով, չպահանջելով լրացուցիչ միջոցներ և հաստիքներ, թույլ կտա լուծել հանրապետության գիտատեխնիկական համակարգում կուտակված խնդիրները և արդյունքում այն դուրս կբերի ճգնաժամային վիճակից:

Համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետով իրեն վերապահված իրավունքների, ՀՀ ԳԱԱ-ի կողմից պատրաստված է առաջարկությունների փաթեթ, որը նախատեսված է ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար:

Փաթեթում բերված նյութը հիմնականում պատրաստված է ՀՀ ԳԱԱ-ի բաժանմունքների և նրանց պրոբլեմային խորհուրդների, ինչպես նաև ինստիտուտների կողմից արված առաջարկությունների հիման վրա: Նյութը պարունակում է՝

♦ Հիմնարար հետազոտությունների հիմնական և գերակա ուղղությունների ձևավորման սկզբունքները, որոնք թույլ կտան հետագայում որոշելու գերակայությունների ցանկը և որոշակի մոտավորությամբ զարգացնել այն բնագավառները, որոնցում Հայաստանն ունի զգալի ներուժ և միջազգային ճանաչում: Նշված են նաև այն բնագավառները, որոնք կարող են հանդիսանալ համատեղ հետազոտությունների ասպարեզ:

♦ Տրված են առաջարկություններ 12 նպատակային ծրագրերի վերաբերյալ: Ակնկալելով պետական մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությունը նյութի քննարկմանը, հուսով ենք, որ համատեղ ուժերով կհաջողվի դրա հիման վրա ձևավորել համապատասխան պետական առաջադրանքներ ընդունված կարգի համաձայն:

♦ Բերված են ներդրման համար ՀՀ ԳԱԱ-ի ինստիտուտների կողմից ներկայացված 31 առաջարկներ, որոնց հիման վրա, հավանության արժանանալու դեպքում, կձևավորվեն բիզնես-ծրագրեր:

♦ Նշված են գիտության բնագավառի օրենսդրական դաշտը ապահովող փաստաթղթերի նախագծերը:

Ակնհայտ է, որ գիտության արմատական վերակառուցումը պետք է ընթանա, մի կողմից գիտական կազմակերպությունների կառավարման օպտիմիզացման և գիտությանն օժանդակող ենթակառուցվածքների կատարելագործման, մյուս կողմից՝ գիտական ուղղությունների ճշգրտման և գիտական կադրերի նպատակային պատրաստման և տեղաբաշխման ուղղությամբ:

Ինչպես արդեն նշվեց, հաջողվել է կնքել համատեղ գիտական գործունեության պայմանագրեր արտասահմանյան գիտական մի շարք հայտնի կազմակերպությունների հետ: Արտասահմանյան կազմակերպությունների, բարերարների միջոցով հաջողվել է լուծել ՀՀ ԳԱԱ-ի համակարգի առջև ծառացած մի շարք հրատապ խնդիրներ, որոնք անհրաժեշտ են Ակադեմիայի գործունեության համար:

Դրանց թվում չի կարելի չնշել միջազգային գիտաժողովների անցկացումը, գրքերի, ամսագրերի հրատարակումը, գիտնականներին տրվող նյութական օգնությունը և այլն:

Ինչպես միշտ, անգնահատելի է Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի կողմից ԳԱԱ-ին ցուցաբերվող նպատակային օժանդակությունը և աջակցությունը: Հաշվետու տարվա ամենածանր օրերին Հիմնադրամն օգնեց լուծելու գրքերի ու ամսագրերի հրատարակման, գիտնականների, մանավանդ երիտասարդ մասնագետների, օժանդակության հետ կապված մի շարք հրատապ հարցեր:

Կցանկանայի առանձնահատուկ կերպով նշել Հայաստանում գիտության զարգացման նպատակին ուղղված Հայ օգնության ֆոնդի շնորհակալ գործունեությունը:

Արդեն երրորդ տարին է, ինչ այս հիմնադրամը կազմակերպում է մրցանակաբաշխություն լավագույն գիտական աշխատանքների ֆինանսավորման նպատակով: Սակայն հասկանալի է, որ այս բոլորը չի կարող համարվել բավարար, որովհետև միջազգային զրանտները և պայմանագրերը հասանելի են սահմանափակ թվով գիտական ուղղությունների և գիտնականների ու չեն լուծում մեր գիտական հանրության աշխատանքի պայմանների և վարձատրման հարցերը: Բավական է նշել, որ 1999 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած մեր ինստիտուտները նախատեսված շատ կարևոր հատկացումներ չեն ստացել: Չնայած այս ընթացքում առանձին հովանավորների օգնությամբ մեզ հաջողվել է տպագրել մի քանի տասնյակ գիրք և նախատեսված ամսագրերի մեծ մասը, սակայն շատ աշխատություններ ֆինանսավորման պակասի պատճառով մնացել են հրատարակչությունում, և գիտնականների աշխատանքը փաստորեն իր նպատակին չի հասել: Աշխատանքները տուժում են նաև էլեկտրաէներգիայի, հեռախոսի, ջրի, գազի, կենդանիների կերի, փոստային փոխադրումների, վառելիքի և այլ ծառայությունների համար կուտակված պարտքերի պատճառով:

Հաշվետու տարում միջազգային գիտական ամենաբարձր ատյաններում ՀՀ ԳԱԱ-ի համակարգի ինչպես ճանաչում ունեցող, այնպես էլ երիտասարդ շատ գիտնականների աշխատանքները արժանացել են բարձր գնահատականների, իսկ դրանց մի մասը՝ կիրառության: Շատ գիտնականներ զեկուցումներով մասնակցել են միջազգային բարձր մակարդակի համաժողովներում: Իր հերթին ԳԱԱ-ն կազմակերպել է մի շարք միջազգային գիտաժողովներ: Սովորույթ է դարձել, որ ԳԱԱ-ում՝ մեր գիտնականների մասնակցությամբ հանրապետության բազմաթիվ գիտական կազմակերպություններ անց են կացնում գիտության հետ առնչվող գիտաժողովներ, սեմինարներ:

Նախորդ տարիներին մեծ գործ է կատարվել ինստիտուտների շենքերի վերանորոգման ուղղությամբ: Սակայն այդ գործը դեռ չի ավարտվել, և մենք պետք է խնդրենք կառավարությանը կրկին անգամ օգնել մեզ այդ հարցում:

Ներկայումս ՀՀ ԳԱԱ-ի համակարգում կենտրոնացված է հանրապետության ողջ գիտական ներուժի կեսից ավելին: Մենք պարտավոր ենք ռացիոնալ օգտագործել այդ ներուժը:

Բերված օրինակները վկայում են, որ ՀՀ ԳԱԱ-ի գիտնականները հիմնականում պահպանել են ձեռք բերած գիտական նվաճումները, սակայն, անկասկած, ԳԱԱ-ի կողմից կատարված և կատարվող աշխատանքների արդյունքները լրիվ կարող են օգտագործվել միայն մեր արդյունաբերության, գյուղատնտեսության և մյուս ճյուղերի անհրաժեշտ ծավալման պայմաններում:

Վերջապես նշեմ, որ գիտության մասին ընդունված Օրենքի դերն ու նշանակությունը չափազանց մեծ է, բայց այն կտա հանրօգուտ արդյունք, եթե մենք կարողանանք հարկ եղածի պես օգտվել այդ Օրենքի ընձեռած հնարավորություններից:

Ես պետք է նշեմ, որ այս տարի աշխատանքների ամփոփումը մենք սկսել ենք մի քանի ամիս առաջ: Բաժանմունքները, այնուհետև նախագահությունը լսում են ինստիտուտների հաշվետվությունները, նախօրոք նշանակելով ստուգող հանձնաժողովներ: Այս հաշվետվությունները կշարունակվեն, դառնալով կանոն:

Թույլ տվեք սրանով ավարտել իմ ներածական խոսքը և ձայնը տալ ակադեմիկոս Վ.Բարխուդարյանին՝ հաշվետվության համար:

(Տես՝ 4-րդ էջը)

ՆՈՐԻՑ՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ»

Միավորված ազգերի կազմակերպությունը իր պաշտոնական սայտում Լեռնային Ղարաբաղը ճանաչել է Հայաստանի մաս: Ինչպես հաղորդում է ադրբեջանական AHC հեռուստաալիքը, այդ սայտի «Մարդու իրավունքների պաշտպանությունը» բաժնում Լեռնային Ղարաբաղը բնութագրվում է որպես Հայաստանի Հանրապետության մաս: Պաշտոնական Բաքուն հույս է հայտնել, որ կատարվածը ընդամենը ՄԱԿ-ի սայտի օպերատորների տեխնիկական սխալն է:

* * *

Ամերիկյան Վիսկոնսի նահանգի սենատը որոշում է ընդունել իր տարածքում ապրիլի 24-ը Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության (1915 – 1923թթ.) հիշատակի օր ճանաչելու մասին: Նահանգի սենատը իր այդ որոշման ընդունումը բացատրել է այնպիսի հանցագործությունների մասին, ինչպիսին ցեղասպանությունն է, բնակչության իրազեկության բարձրացման անհրաժեշտությամբ, և որպեսզի ապագայում բացառվի նման չարիքների կրկնությունը:

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ 2001թ. գործունեության հիմնական արդյունքների մասին

ՀՀ ԳԱԱ ՓՈԽՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ.Բ.ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

(հրապարակվում է կրճատումներով)

Հաշվետու տարվա ՀՀ ԳԱԱ գործունեության արդյունքների ամփոփումը հավաստում է այն ռեալ իրողությունը, որ թեպետև շարունակվել են ֆինանսատնտեսական և սոցիալական դժվարին պայմանները, այդուհանդերձ ԳԱԱ լարված աշխատել է և որոշ հաջողություններ ունի հիմնարար, ինչպես նաև կիրառական գիտությունների բնագավառներում:

2001 թվականին գիտական հետազոտություններ են կատարվել պետական բյուջեից ֆինանսավորվող 466 թեմաներով: Հրատարակվել է ավելի քան 90 աշխատություն, 1332 գիտական հոդված հանրապետությունում և 850 հոդված՝ արտասահմանում:

Այժմ համառոտակի անդրադառնանք հաշվետու տարում մեզ անհանգստացնող մի քանի հարցերի մասին:

Անկախություն ձեռք բերելուց հետո, բնականաբար, այն մտայնությունն էր իշխում, որ գաղափարական կաշկանդումներից ազատագրվելով հայագիտությունն ազգային ակադեմիայում առավել բուռն ու լիաթոք զարգացում կապրի: Սակայն, երբ իմի ենք բերում անցած տաս տարիներին այդ ասպարեզում մեր կատարված աշխատանքների արդյունքները, լավատեսորեն չենք տրամադրվում: Երեք տարի առաջ այդ մասին լուրջ ահազանգ հնչեց: 1999թ. մարտի 17-ի ԳԱԱ տարեկան ժողովում հանգուցյալ ակադեմիկոս Լ.Խուրշուդյանը սուր ելույթ ունեցավ, իր խոսքերով ասած. «Հայագիտության բնագավառում տիրող անհանգստացնող վիճակի» մասին: Ցավոք, այդ ահազանգն որևէ նշանակություն և հետևանք չունեցավ:

Հայագիտական ինստիտուտների մի մասը տուրք տալով ժամանակի ոգուն, ինչ որ չափով, տարվեց հրատարակված գրքերի շնորհանդեսներով, հոբելյանական նստաշրջաններ կազմակերպելով, որոնք գիտական առումով, թող ներվի ասել, էական ոչինչ չեն տալիս: Հումանիտար գիտությունների բաժանմունքը, մոռացության տվեց նախկինում կազմակերպվող գիտական բանավեճերը, էական հիմնահարցերի և ծանրակշիռ աշխատությունների քննարկումները, որոնք գիտությունը խթանող կարևոր ազդակներ էին: Հասկանալի է, անհրաժեշտ է նաև հոբելյանների կատարումը: Մեր բարոյական պարտքն է արժանին մատուցել հանիրավի ստվերում մնացած կամ անվանի գործիչներին: Սակայն հոբելյանները կարելի է իրականացնել, թերևս ավելի հաջող, զանգվածային լրատվության միջոցով, իսկ կարող մասնագետների ուժերը չցրել, այլ նպատակաուղղել գիտության առաջ ծառացած խնդիրները լուծելուն:

Անցումային շրջանի դժվարությունների, ինչպես նաև մեր պասիվ և հայեցողական գործելակերպի հետևանքով անկախությունից հետո ոչ թե զարգացավ, այլ նահանջ ապրեց հայագիտությունը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը տեսնում և առաջարկներ են արվում ստեղծել հայագիտական հատուկ կենտրոն: Կարծում ենք՝ չկա դրա անհրաժեշտությունը, քանի որ ՀՀ ԳԱԱ հումանիտար բաժանմունքն, որի կազմում են հայագիտական գիտահետազոտական ինստիտուտները, հենց այդպիսի կենտրոն է: Եվ եթե նման կենտրոն այնուամենայնիվ պետք է ստեղծվի, ապա միայն և միայն բաժանմունքի ներսում, նրա իրավասության ներքո: Չէ՞ որ ինստիտուտների գործունեությունը համակարգող, գիտության տվյալ ուղղության առաջընթացն ապահովող գիտաստեղծագործական աշխատանքների կազմակերպչական հիմնական օղակն եղել և մնում է բաժանմունքը:

Պետական բարձրագույն իշխանությունները նկատի պետք է ունենան, որ իրենց բնույթով հումանիտար գիտությունները այն ասպարեզն են, որը ամենից շատ պահանջ ունի պետական հովանավորության:

Առհասարակ անհրաժեշտություն է զգացվում ուժեղացնել ՀՀ ԳԱԱ ինչպես հումանիտար, այնպես էլ մյուս բաժանմունքների գործունեությունը:

Գիտությունը և կրթությունը փոխկապակցված համակարգեր են: Որքան սերտ և համակողմանի է լինում դրանց համագործակցությունը, այնքան երկու բնագավառներն էլ շահում են: Ազգային ակադեմիան բազում թելերով կապված է և իր մասնակցությունն է բերում հանրապետության ԲՈՒՀ-երի աշխատանքներին: Եվ կատարվում է հակառակը՝ ԲՈՒՀ-երը համագործակցում են ակադեմիայի հետ:

Անհրաժեշտ է ԲՈՒՀ-երի հետ համագործակցությունը թերևս առավել համակողմանի դարձնել, ինչպես, ասենք, կարևոր հիմնախնդիրների քննարկումները կազմակերպել գիտական խորհուրդների համատեղ նիստերում, ուժեղացնել ուսանողների գործնական աշխատանքները ակադեմիական ինստիտուտների լաբորատորիաներում, դասախոսների գիտական պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով գործուղել ակադեմիայի համապատասխան ինստիտուտ և այլն, և այլն:

Դրանով հանդերձ ամենևին պատճառաբանված չէ ազգային ակադեմիան և ԲՈՒՀ-երը միավորելու մերթընդմերթ առկայծող մտայնությունը: Նման քայլ կատարելը կարող է միայն ավելացնել անցման շրջանում մեր գործած սխալների քանակը: Այն սխալների, երբ արտասահմանում կիրառվող որևէ երևույթ, առանց նկատի առնելու մեր պայմաններն ու առանձնահատկությունները, մեխանիկորեն ընդօրինակվում է: Այդպես կատարվեց 1992թվականին, երբ արտասահմանյան երկրների օրինակով հապճեպ մտցվեց գիտական աշխատանքի կազմակերպման միանգամայն նոր սկզբունք՝ թեմատիկ պայմանագրային սկզբունքը: Տաս տարվա փորձը տխուր հետևանքների հանգեցրեց: Այն ցույց տվեց, որ գիտահետազոտական ինստիտուտները, փաստորեն, զրկվեցին գիտության տվյալ ճյուղի աշխատանքները կազմակերպելու, ուղղություն տալու և զարգացնելու հնարավորությունից: Ուրիշ խոսքերով ասած արտասահմանում տարածված և արդյունավետ գործող ինստիտուտի հախուռն ընդօրինակումը մեզ մոտ հակառակ արդյունք տվեց:

Ինչպես հայտնի է գիտության տարբեր ճյուղերի և կրթության հիմքում ընկած են հիմնարար գիտությունները: Դրանք են հիմնարար գիտելիքներ տալիս, ստեղծում հասարակության մտավոր բազան, վճռական ազդեցություն ունենում կրթության մակարդակի վրա: Հենց հիմնարար գիտությունների զարգացումն է պայմաններ ստեղծում լուծելու տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, ազգային անվտանգության և այլ հարցեր: Այդ նկատառումով պետությունը պետք է իր տեսադաշտում պահի և հոգ տանի երկրի ընդհանուր առաջընթացն ապահովող հզոր այդ ուժի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում հիմնարար գիտությունների գլխավոր կենտրոնը, ինչպես և ամրագրված է օրենքում, ՀՀ ԳԱԱ-ն է: Հետևաբար, արդի փուլում հրամայական է դառնում ոչ թե գիտությունը կրթության հետ միավորելը և հիմնարար գիտության հիմնական կրող ԳԱԱ տարալուծելը, այլ հանրապետության պահանջներից ելնելով, գիտական և կրթական համակարգի խելամիտ բարեփոխման իրականացումը: Բարեփոխումներ կատարելու համար անհրաժեշտ է իրավական դաշտ:

Ի վերջո 2000թ. դեկտեմբերին ընդունվեց օրենք «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին»: Օրենքի 8-րդ հոդվածով Ազգային ակադեմիային տրվում է հատուկ կարգավիճակ: Նրան վերապահվում է Հանրապետության գիտական բարձրագույն կենտրոնի իրավասություն: ԳԱԱ մասնակցում է գիտահետազոտական ծրագրերի փորձաքննության սկզբունքների և մեթոդների մշակմանը, իրականացնում փորձաքննություն հիմնարար գիտությունների բնագավառում, համակարգում գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարվող հիմնարար հետազոտությունները:

ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներին հնարավորություն է ընձեռվում ունենալ հաշվեկշիռ, նախահաշիվ, բանկային հաշիվ, զինանշանով կնիք և տնօրինելու իրենց տրամադրված գույքը (հոդված 9):

Օրենքի 19-րդ հոդվածը նվիրված է գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությանը և թողարկավորմանը: Հոդվածի առաջին կետում գրված է. «Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և կենսաթոշակը պետք է նպաստեն գիտական աշխատանքի վարկի բարձրացման ու գիտական կադրերի կայացման գործընթացին, բավարար նյութական պայմաններ ապահովեն ինքնուրույն և արդյունավետ ստեղծագործական գործունեություն իրականացնելու համար: Սպասվում է, որ գիտական աստիճանի և աշխատանքային ստաժի համար տրվելու է հավելավճար, ինչպես և հավելավճար է տրվելու գիտական աստիճան ունեցող կենսաթոշակառուներին»:

Դժվար չէ նկատել, որ ընդունված օրենքում դրական լուծում են ստացել գիտության զարգացմանը նպաստող մի շարք էական հարցեր: Հանրապետության կառավարությունը հնարավորություն չուներ, իր որոշումներով հաշվետու տարում իրականացնել օրենքով սահմանված խնդիրները, քանի որ պետական բյուջեն հաստատված էր: Ակնկալվում էր, որ գիտության մասին օրենքը կսկսի գործադրվել հաջորդ տարվանից, սակայն զարմանալի ու ցավալի է, որ 2002 թվականին նույնպես ոչ մի քայլ չարվեց օրենքը կիրառելու ուղղությամբ, եթե չասենք, որ կատարվեց հակառակը:

Այսպիսով, հաշվետու տարվա արդյունքների ամփոփումը և այս տարվա առաջին եռամսյակում ստեղծված իրավիճակը ցույց են տալիս, որ գիտական ներուժը պահպանելու և գիտության առաջընթացն ապահովելու համար ՀՀ ԳԱԱ-ում դրությունը բարվոք չէ, ծանր է:

Անհրաժեշտ է միջոցների դիմել գիտության մասին օրենքը կիրառելու նպատակով, սերտ և գործնական համագործակցություն ստեղծել հանրապետության բարձրագիր իշխանությունների և ազգային ակադեմիայի ղեկավարության միջև և համատեղ ջանքերով փորձել բարելավել դրությունը:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ, ՊԱՐՈՆ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն վարչապետ:

Երկար մտածել եմ, թե գրածս նամակը Ձեզ կհասնի՞, նրա մասին տեղյակ կպահե՞ն Ձեզ, թե՝ ոչ: Եվ ստիպված գրում եմ բաց նամակ:

Երևի Ձեզ հայտնի չէ, որ մեր հանրապետության գիտական հիմնարկների աշխատողները մղված են ամենահետին պլան: Այն մարդիկ, որոնք մինչև 1990թ. ստանում էին բարձր աշխատավարձ, այսօր ստանում են ամենանվազագույնը. Գիտությունների ազգային ակադեմիայի գիտաշխատողների միջին աշխատավարձը այսօր կազմում է 13 հազար դրամ, մի գումար, որով, ինչպես գիտեք, չի կարելի հոգալ անգամ ամենանվազագույն հոգսերը:

Եվ չնայած այդ գումարի ողորմելի չափին, մարդիկ միշտ չէ, որ ստանում են այդ «աշխատավարձը»: Ազգային ակադեմիայի ինստիտուտների գիտաշխատողները աշխատավարձ չեն ստացել անցած տարվա նոյեմբերից մինչև այսօր, իսկ նախարարությունների գիտական հաստատությունների աշխատողները չեն ստացել 1999 և 2000 թվականների վերջին երկու ամիսների համար ու 2001թ. հոկտեմբեր ամսից առ այսօր:

Խնդրում եմ, հարցրեք Ձեր նախարարին, թե իր գերատեսչության աշխատողների աշխատավարձը երբևէ ուշացե՞լ է: Լուրեր են պտտվում, որ նրանք ստացել են նույնիսկ 13-րդ, լրացուցիչ աշխատավարձ...

Ձեզ պետք է հայտնի լինի, որ գիտական հիմնարկների ծախսերը նախատեսվում են պետության հետ կնքված պայմանագրերով: Դրանք գումարներ են կատարվող թեմաների համար, և որոնց մեջ աշխատավարձը կազմում է շուրջ 90 տոկոս: Այդ մասին միթե չգիտե՞ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարը, որը Ազգային ժողովում հարցադրումներին պատասխանում է՝ «Գիտությանը աշխատավարձի պարտքեր չունենք»: Հավանաբար, նա գիտական հիմնարկների համար նախատեսված աշխատավարձի կետը ընդհանրապես չի տեսնում, քանի որ այն գրված է ՀՀ բյուջեի վերջում, այն էլ այլ ծախսերի ցուցակի մեջ:

Ի դեպ, իրեն հարգող պետությունը առաջին հերթին ֆինանսավորում է այն հիմնարկներին, որոնք աշխատում են պետության հետ կնքված պայմանագրերով: Մինչդեռ մեր պետությունը այդ մասին նույնիսկ չի էլ մտածում:

ՀՀ իշխանությունները ընթացք չեն տալիս նաև գիտական հիմնարկների աշխատողների գանգատներին, արհամարհում, անտեսում են նրանց բողոքի հավաքույթներն ու ցույցերը: Մի՞թե դա կառավարության պահվածքի վայելուչ և ընդունելի ձև է:

Մեծարգո պարոն վարչապետ, մեր կազմակերպության հարյուրավոր անդամներ միշտ էլ մասնակցել են կազմակերպված բողոքի ցույցերին, և ես այսօր նրանց հանձնարարությամբ եմ գրում սույն նամակը՝ այն հույսով, որ Դուք երևի տեղյակ չեք ստեղծված դրությանը:

Մեր երկիրը միշտ էլ ունեցել է զարգացած գիտություն, գիտական հարուստ ներուժ, որը ճանաչում ուներ ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև նրա սահմաններից դուրս: Մեր գիտնականներից շատերը եղել և մնում են աշխարհի նշանավոր ակադեմիաների անդամներ, հայտնի են եղել ամբողջ աշխարհում: Թողեք, որ այդ բարձր վարկն ու համարումը անբաժան մնան մեր հանրապետության նկարագրից: Բայց գիտությունը դատարկ ձեռքերով և փորով չի ստեղծվում, անհրաժեշտ են ներդրումներ՝ ինչպես աշխատավարձի, այնպես էլ նոր սարքավորումների, նյութերի գնման, էլեկտրաէներգիայի, ջրի, տրանսպորտային միջոցների և այլ ծախսերի համար: Այսօր գիտական հիմնարկներից շատերը կքում են անասելի պարտքերի տակ և միջոցներ չեն ստանում դրանք փակելու համար:

Սպասում ենք Ձեր շահագրգիռ, եռանդուն և սրտացավ միջամտությանը, քանի որ ուշացումը հղի է անդառնալի հետևանքներով:

ՀՀ ԳԱԱ պատերազմի, զինված ուժերի և աշխատանքի վետերանների միասնական կազմակերպության անդամների անունից Ս.ՄԻՐԶՈՅԱՆ

Կազմակերպության նախագահ,
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Երբ նամակը պատրաստվում էր հրապարակման, ակադեմիայի կոլեկտիվին տրվեց երկու ամսվա աշխատավարձ:

ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄԸ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱ՞ԿՆ Է

Էլեկտրամագնիսական դաշտում տեղավորված մարդը սկսում է լուսափայլատակել: Այդ փայլատակումը պարզ երևում է լուսանկարի վրա. մարդու մարմինը շրջապատված է լուսե պսակով: Կարծիք կա, որ այս լուսարձակումն է հենց մարդու էությունը, որը անվանում են նաև՝ աուրա: Իսկ էքստրանսենսներից ոմանք ասում են, որ դա ոչ թե պարզապես կենսաէներգիան է, այլ մարդկային հոգին:

Եվ երբ մարդը մահանում է, այդ նրա հոգին է էներգիայի փնջի տեսքով թռչում երկինք: Համենայն դեպս, փաստը մնում է փաստ, որ մահացած մարմինները էլեկտրամագնիսական դաշտում լուսափայլատակում են:

Մարդու հոգեկան էներգետիկան սնվում է երկու աղբյուրներից՝ վերևից, այսինքն՝ տիեզերքից եկող, և ներքևից եկող, այսինքն՝ երկրից: Ներքևից եկող էներգետիկան մեր մեջ հարուցում է մարմնական զգացումներ, վերևից եկող էներգետիկան՝ հոգեկան:

Ռուս գիտնական Վերնադսկին դեռ 20-րդ դարի սկզբին ստեղծեց ուսմունք նոոսֆերայի մասին: Այն ուսմունք է բիոսֆերայի՝ մարդու բանական գործունեության արդյունքում ստեղծված նոր էվոլյուցիոն վիճակի մասին: Եվ ինչո՞ւ չենթադրել, որ երկիր մոլորակը շրջապատված է մի տիեզերական բանականությամբ, որը ինչ-որ ձևով առնչվում, համագործակցում է յուրաքանչյուր կենդանի և մահացած մարդու բանականության հետ:

Այդ համագործակցությամբ է, հատկապես, բացատրվում նախազգացումը: Ասենք, դուք մտադրվել եք մեկնել կամ գնալ ինչ-որ տեղ: Եվ ահա գալիս է ժամանակը, և հանկարծ ձեր մեջ ամեն ինչ ընդվզում է և պահանջում՝ մի գնա: Եվ երբ, այնուամենայնիվ, դուք այդ տեղը գնում եք՝ ձեզ հետ դժբախտություն կամ անցանկալի, անախորժ մի բան է կատարվում: Եվ միայն այդ ժամանակ դուք հիշում եք, թե ինչպես չէիք ուզում գնալ:

Այո, այդ նախազգացումը տիեզերական բանականության ինչ-որ աղբյուրից ձեզ հասցեագրված զգուշացում էր: Եվ երևի զուր չէ հավատալիքը պահապան հրեշտակների մասին: Չէ՞ որ այդ հրեշտակը կարող է լինել էներգետիկական մի ամպիկ, ստվեր: Հայտնի են բազում-բազում դեպքեր, երբ նախազգացումը մարդկանց իսկապես փրկել է վերահաս փորձանքներից կամ դժբախտություններից:

Եվ ինչո՞ւ չմտածել նաև, որ այդ նախազգացումը մարդուն հուշել է նրան անչափ սիրող՝ մահացած որևէ հարազատի, բարեկամի երկնային ստվերը, հոգին, որ տիեզերքում է՝ էներգետիկական ամպիկի, ստվերի կամ մի այլ ձևով:

ԸՆԴԵՐՔԸ ՀԱՐՈՒՍՏ Է, ԻՍԿ ԵՐԲ ՊԵՏՔ Է ՀԱՐՍՏԱՆԱ ԵՐԿԻՐԸ

ՀՀ լեռնային արդյունաբերության զարգացման հիմնախնդիրները

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Որպեսզի երևա, թե Հայաստանը որքանով է հարուստ նշված օգտակար հանածոներով, ասենք հետևյալը.

– պղինձ-մոլիբդենային հանքաքարերի ռեսուրսներով, եթե դրանք շահագործվեն 1990թ. մակարդակով, երբ Հայաստանի հանքավայրերը շահագործվում էին ողջ ԽՍՀՄ պահանջները բավարարելու նպատակով, Հայաստանը ապահովված կլինի առնվազն 200 տարի,

– երկաթի հանքաքարերի ռեսուրսներով (մոտ 2,7 մլրդ. տ) տարեկան 9 մլն. տ արդյունահանելու դեպքում, որից հնարավոր կլինի ստանալ մոտ 2 մլն. տ. մաքուր երկաթ, որի 50 տոկոսը լիուլի կբավարարի Հայաստանի աճող պահանջները, իսկ մյուս կեսը կվաճառվի տարադրամով, Հայաստանն ապահովված կլինի 300 տարի,

– բենթոնիտային կավերի ռեսուրսներով (ավելի քան 500 մլն. տ) Հայաստանն ապահովված կլինի 1000 տարի,

– բնական ցեոլիտների ռեսուրսներով (600 մլն.տ, այժմ հաստատված պաշարները՝ 13 մլն. տ), տարեկան 200 հազ. տ արդյունահանելու դեպքում, Հայաստանն ապահովված կլինի մոտ 3000 տարի,

– դիատոմիտների ռեսուրսներով (500 մլն. խոր. մ., այժմ հաստատված պաշարները՝ 16,1 մլն. խոր. մ) տարեկան 100 հազ. խոր. մ արդյունահանելու դեպքում, Հայաստանն ապահովված կլինի 5000 տարի, ընդ որում, արդյունահանված ու վերամշակված դիատոմիտների ավելի քան 80 տոկոսը բարձր գներով (տոննան մոտ 1000 դոլարով), կվաճառվի արտասահմանյան երկրներին,

– պեռլիտների ռեսուրսներով (ավելի քան 1 մլրդ. խոր. մ, հաստատված պաշարները՝ 151 մլն. խոր. մ), տարեկան մեկ մլն. խոր. մ արդյունահանելու դեպքում, Հայաստանն ապահովված կլինի ավելի քան 100 տարի,

– գեղեցիկ գունային երանգներ ունեցող մագմատոգեն՝ խորքային ծագման երեսպատման «քարերի» ռեսուրսները գնահատվում են մի քանի տասնյակ մլրդ. խոր. մ և, եթե Հայաստանը տարեկան արտադրի մեկ մլն. քառ. մ երեսպատման սալիկներ, ապա այդ ռեսուրսները (հանքավայրերը նույնիսկ բացիանքով շահագործելիս, որի ժամանակ արդյունահանվում են պաշարների չնչին մասը) Հայաստանի պահանջները կարող են բավարարել միլիոնավոր տարիներ.

– նույնը կարելի է ասել նստվածքային ծագման երեսպատման «քարերի» (զանազան մարմինների, մարմարացված կրաքարերի, ավազաքարերի) մասին,

– պեմզաների ռեսուրսները տարբեր մասնագետների գնահատումներով խիստ տարբեր են և տատանվում են 500-ից մինչև 1000 մլն. խոր. մ սահմաններում: Եթե տարեկան արդյունահանվի 200 հազ. խոր. մ պեմզա, ապա այդ ռեսուրսները կարող են բավարարել 2000 – 4000 տարի:

Բավականաչափ հզոր ռեսուրսներ ունեն նաև մեր հանքային ու քաղցրահամ ջրերը, որոնց մեծ մասը լցվում են գետերն ու անօգուտ կորչում, ավելի ստույգ՝ ջրային ռեսուրսներ են մատակարարում մեզ ոչ բարեկամ հարևան երկրներին: Ասենք, որ հանքային ջրերի այսօրվա դրությամբ հայտնաբերված աղբյուրների ռեսուրսները գնահատվում են ավելի քան 60 հազար խոր. մ/օր, իսկ քաղցրահամ ջրերինը՝ Հայաստանի 37 շրջաններից միայն 13-ում և Երևան քաղաքի շրջակայքում՝ ավելի քան 6 մլն. խոր. մ/օր, կամ՝ 70 խոր. մ մեկ վայրկյանում (70.000 լիտր մեկ վայրկյանում):

Ա. Մետաղական օգտակար հանածոները և դրանց արդյունահանման արդի վիճակը

Հայաստանը մետաղական օգտակար հանածոների որոշակի տեսակներով՝ պղնձի և մոլիբդենի ռեսուրսներով, պաշարներով և, նույնիսկ, արդյունահանման գծով, ԽՍՀՄ-ի օրոք առաջատար տեղ էր զբաղեցնում ոչ միայն ԽՍՀՄ հանրապետությունների, այլև աշխարհի շատ ու շատ երկրների մեջ: Իսկ դրանց որոշ տեսակների՝ երկաթի, կապարի, ցինկի, ոսկու, արծաթի գծով այսօր ոչ միայն կարող է բավարարել սեփական պահանջները, այլև որոշակի քանակներով արտահանել այլ երկրներ:

ՀՀ մոլիբդենի հետախուզված պաշարները և կանխատեսումային ռեսուրսներն ամբողջությամբ, պղնձի ռեսուրսների և պաշարների գերակշիռ մասը (մոտ 90%), ցրված հազվագյուտ տարրերի (ռենիումի, սելենի, տելուրի, բիսմութի, գերմանիումի) գերակշիռ մասը և ուղեկից ազնիվ մետաղների (ոսկու և արծաթի) որոշակի մասը կապված են պղնձամոլիբդենային համալիր հանքաքարերի հետ:

Պղնձամոլիբդենային հանքավայրերից, ԽՍՀՄ-ի օրոք, շահագործվում էին երեքը՝ Քաջարանի (1952թ.), Դաստակերտի (1952թ.) և Ագարակի (1963թ.), որոնցից Դաստակերտի հանքավայրի շահագործումը 1976թ. դադարեցվեց ցածր շահութաբերության պատճառով: Ագարակի հանքաքարերի պաշարները խիստ սահմանափակ են՝ Ագարակի կոմբինատի ամբողջ կարողությամբ աշխատելու դեպքում դրանք կարող են բավարարել 7 – 8 տարի: Ասենք, որ Քաջարանի կոմբինատը այժմ աշխատում է իր վաղեմի կարողության հազիվ 60 տոկոսի չափով, իսկ Ագարակինը՝ 10 – 15:

Այսօր Հայաստանում չկան պղնձի և մոլիբդենի գծով ավարտուն շրջափուլեր, այդ իսկ պատճառով կոմբինատների գոյությունը մի կերպ պահպանելու նպատակով, խտանյութերը (կիսաարտադրանքները) վաճառվում են հարևան երկրներին, որից հանրապետությունն ունենում է զգալի կորուստներ՝ չեն վճարվում մոլիբդենի խտանյութերում պարունակվող արժեքավոր ուղեկից տարրերի՝ ռենիումի, սելենի, բիսմութի և մյուսների արժեքները, այն դեպքում, երբ մեկ տոննա ռենիումի մեծածախ գինը՝ 1999թ. կուրսով, կազմում՝ 990 հազար նախկին ԽՍՀՄ ռուբլի, մոլիբդենի 15 հազ. ռուբլու դիմաց (ռենիումը մոլիբդենից թանկ է 66 անգամ):

Քաջարանի հանքավայրում մակաբացման աշխատանքների ժամանակ տարեկան արդյունահանվում են մի քանի մլն տ այսպես կոչված «աղքատ» հանքաքարեր, որոնք դատարկ ապարների հետ տեղափոխվում են թափոնակույտեր և անվերադարձ կորսվում, և, այն էլ այն դեպքում, երբ հարևան՝ Ագարակի կոմբինատը մշակում է դրանցից ավելի ցածր պարունակություններով հանքաքարեր, որոնց պաշարներն էլ խիստ սահմանափակ են: Յու. Ա.Աղաբալյանի հաշվարկներով Ագարակի կոմբինատի համար շատ ավելի ձեռնտու է օգտագործել Քաջարանի «աղքատ» հանքաքարերը, քան արդյունահանել սեփական հանքավայրից:

Հայաստանում հայտնի են կապարցինկային, ոսկի-բազմամետաղային և բուն բազմամետաղային մի քանի տասնյակ հանքավայր-հանքաերևակումներ՝ Գլաձորի և Ախթալայի բազմամետաղային, Շահումյանի, Ազատեկի, Արմանիսի, Թեյ-Լիճվազի ոսկի-բազմամետաղային, Հանքավանի սկառնային՝ պղինձ-վոլֆրամ-ոսկի-արծաթ պարունակող հանքավայրերը, Կաքավաքարի, Չիրախլուի, Մարջանի և բազմաթիվ այլ հանքաերևակումները: Նշենք, որ վերը թվարկված հանքավայրերից, ԽՍՀՄ-ի օրոք՝ մինչև 1980թ. շահագործվել է միայն մեկը՝ Ախթալայի կապար-ցինկի հանքավայրը, իսկ մեկը՝ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը շահագործման մեջ է ներգրավվել 1999թ., որի հանքաքարերից կորզվում են միայն ազնիվ մետաղներն ու պղինձը:

Այսօր, Հայաստանում ոչ միայն չկա գործող մի հանքավայր, որից արդյունահանվի կապար և ցինկ, այլև չկա որևէ մեկը, որը, այսօր, նախապատրաստվի շահագործման: Նշված մետաղների ռազմավարական նշանակությունն ակնհայտ է, հենց թեկուզ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար, և հիմնավորման կարիք չի զգացվում: Հարկավոր է շուտափույթ հիմնավորել դրանց շահագործման տնտեսական նպատակահարմարությունն ու անցնել հանքաքարերի արդյունահանման և մետաղների կորզման աշխատանքներին: Ասենք, որ միայն Գլաձորի հանքավայրի կանխատեսումային ռեսուրսները, մեր ամենազգույշ հաշվարկներով, գնահատվում են. հանքաքարերինը՝ 16 մլն տ, կապարինը՝ 600 հազ. տ, ցինկինը՝ 600 հազ. տ, պղնձինը՝ 200 հազ. տ, արծաթինը՝ 2000տ, կադմիումինը՝ 3000 տ: Կրկնակի անգամ ավելի ռեսուրսներ են սպասվում մյուս բոլոր հանքավայր-հանքաերևակումներից, որոնց մեջ՝ կապարի և արծաթի շատ բարձր պարունակություններով, առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Կաքավասարի հանքաերևակումը:

Ռազմավարական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող հանքավայրերից է նաև Հանքավանի սկառնային տիպի՝ պղինձ-վոլֆրամ – բազմամետաղային հանքավայրը, որի հետախուզված $C_1 – C_2$ կատեգորիաներով գնահատված պաշարները կազմում են. վոլֆրամի հանքաքարերինը՝ 79,6 հազ. տ, վոլֆրամինը՝ 10,5 հազ. տ, պղնձի հանքաքարերինը՝ 22361 հազ. տ, պղնձինը՝ 134,8 հազ. տ, բիսմութինը՝ 11,23 հազ. տ, գերմանիումինը՝ 269,5 տ, ոսկունը՝ 31,9 տ, արծաթինը՝ 112,3 տ:

Հանքավանի, ինչպես նաև Գլաձորի հանքավայրերի պաշարները նախկին ԽՍՀՄ-ի պաշարների պետական հանձնաժողովի կողմից, գերատեսչական շահերից ելնելով, գնահատվել են արտահաշվեկշռային: Մեզ մնում է շատ աննշան ծախսերով վերագնահատել այդ պաշարներն ու սկսել հանքաքարերի արդյունահանման ու վերամշակման աշխատանքները:

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանական գիտությունների դոկտոր

(Շարունակելի)

ԱՊՐԻԼԻ 24–ԻՆ, ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

1915-ի ապրիլյան եղեռնը հղացած երիտթուրքերի մարդատյաց ծրագրում հատուկ մաս էր կազմում հայ մտավորականությանը գլխովին ոչնչացնելու, հայոց քպնքարը սպանելու զարհուրելի ոճիրը: Ապրիլի 24-ին Կ.Պոլսում, Արևմտահայաստանի և Թուրքիայի շատ քաղաքներում ու գավառներում կալանավորվեցին և ապա աքսորվեցին բազում հայ մտավորականներ, որպեսզի աքսորի ճանապարհներին թուրք խուժանը հոշոտի և քարերով ջախջախի մեկը-մեկից պայծառ ու լուսավոր գլուխները՝ չմոռանալով նախապես հանել նրանց հագուստները, որ ավելի թանկ էր նրանց համար, քան ինքը՝ մարդ արարածը, բանական և մտածող անհավատ հայը:

Ամենակուլ յաթաղանին զոհ դարձած բազում և բազում հայ մտավորականների անունները հայտնի են անուն առ անուն: Սակայն, ցավոք, դեռ կան նաև մոռացված անուններ: Նրանցից մեկն է Ներսես (Մաշտոց) Փափազյանը՝ եղբայրը հայ նշանավոր գրող Վրթանես Փափազյանի և Վահան (կոմս, բժիշկ) Փափազյանի: Եղբայրների հայրը՝ Տեր Մեսրոպ քահանան (հետագայում Շուշտակ վարդապետ) ուսյալ մտավորական էր:

Ներսես Փափազյանը ծնվել է Վանում, նախնական կրթություն ստանալուց հետո, ուսումը շարունակել է Կ.Պոլսում և ապա Արմաշի դպրեվանքում: Մաշտոց վարդապետ ձեռնադրվելուց հետո, իբրև հոգևոր հովիվ ուղարկվում է Ամերիկա, ուր եկեղեցական գործունեությանը զուգահեռ, ընդունվում և ավարտում է Նյու-Յորքի Քոլումբիայի համալսարանը: Մտնելով ՀՅԴ շարքերը, Մեսրոպ վարդապետը շուտով հայ համայնքում հռչակվում է որպես հոգևոր և ազգային երևելի գործիչ: Ինը տարի Ամերիկայում մնալուց հետո, նա վերադառնում է Կովկաս և իր գործունեության շնորհիվ «կասկածելի անձ» որակավորվում ցարական իշխանությունների կողմից:

Մեսրոպ վարդապետին ձերբակալության վտանգից ազատելու համար, Խրիմյան Հայրիկը նրան ուղարկում է Թավրիզ՝ իբրև Առաջնորդական փոխանորդ: Այստեղ. Մաշտոց վարդապետը սկսում է հրատարակել «Ազդարար Առաջնորդարանի» շաբաթաթերթը: Երկու տարի անց, թողնելով վարդապետական թեմը, նա կրկին մեկնում է Ամերիկա և ստանձնում «Հայրենիք» շաբաթաթերթի խմբագրությունը:

Օսմանյան սահմանադրության ընդունումից հետո Ներսես Փափազյանը վերադառնում է Կ.Պոլիս և ազգային-կուսակցական եռանդուն գործունեություն ծավալում: Նա միաժամանակ «Ազատամարտ» օրաթերթի խմբագրության անդամ էր, Կ.Պոլսի «Աշխատանքի տունի» հիմնադիրներից մեկը և «Արդի վարժարանի» ուսուցիչ:

Ապրիլի 24-ի լուսաբացին, բազմաթիվ հայ մտավորականների հետ, ձերբակալվեց նաև Ներսես Փափազյանը, որպեսզի աքսորի ճանապարհին արյունախում դահիճների զոհը դառնա: Հոգևոր և ազգային երևելի գործիչը ընդամենը 43 տարեկան էր:

ԱՇԽԱՐՀԸ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԱԾ Է

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը իր հերթական նիստում լսեց փոխպրեզիդենտ, ակադեմիկոս էմիլ Գաբրիելյանի հաղորդումը «Վարակիչ հիվանդությունների վերահսկումը 21-րդ դարում» միջակադեմիական միջազգային բժշկական համաժողովի արդյունքների մասին:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը ի գիտություն ընդունեց փոխպրեզիդենտ էմիլ Գաբրիելյանի հաղորդումը, հավանություն տվեց համաժողովում ընդունված Հայտարարությանը: Որոշվեց ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան օղակներին և ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի համապատասխան գիտահետազոտական հաստատություններին իրազեկել Հայտարարության հիմնադրույթների մասին: Վերջիններիս հանձնարարվեց իրենց գործունեության մեջ ղեկավարվել Հայտարարության դրույթներով:

«Գիտություն» թերթի աշխատակիցը հանդիպեց ԳԱԱ փոխպրեզիդենտ էմիլ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ, որը մասնակցել էր միջազգային այդ համաժողովին, և խնդրեց պատասխանել մի քանի հարցերի:

– Պարոն Գաբրիելյան, ի՞նչ խնդիրների էր նվիրված այդ համաժողովը:

– Միջակադեմիական բժշկագիտական համաժողովը կայացավ Փարիզում, մարտի 20 – 22-ը: Համաժողովին մասնակցում էին աշխարհի գրեթե բոլոր երկրների բժշկական և բժշկության բնագավառի նշանավոր գործիչներ: Համաժողովի աշխատանքները ողջունեցին Ֆրանսիայի բժշկական ակադեմիայի պրեզիդենտը, Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտը և առողջապահության նախարարը:

Համաժողովը քննարկեց բժշկության և առհասարակ մարդկային հասարակայնությանը վերաբերող անչափ կարևոր մի խնդիր՝ վարակիչ հիվանդությունների վերահսկումը 21-րդ դարում: Այս խնդրի հիմքում դրված էին երկու կարևորագույն պրոբլեմներ: Առաջինը՝ կենսաահաբեկչության հարցն էր, որը հատկապես առնչվում էր վերջին ժամանակներս սիբիրյան խոցի հարուցիչների տարածմանն ու առհասարակ մանրէաբանական զենքի տարածման հարցին: Եվ երկրորդ, հակամիկրոբային (անտիբիոտիկ) դեղերի նկատմամբ միկրոօրգանիզմների դիմակայունության զարգացման խնդիրներին:

Հիմնական զեկուցումներից մեկը՝ «Վտանգավոր ինֆեկցիաների միջազգային պրոբլեմը» թեմայով, ներկայացրեց Նոբելյան մրցանակի դափնեկիր Շոշուա Լիբերբերգը (ԱՄՆ): Նա ներկաների ուշադրությունը սրեց մանրէաբանական զենքի կիրառման չափազանց վտանգավոր սպառնալիքին, այն առումով, որ դա կարող է դուրս գալ մարդկության վերահսկողության շրջանակներից և աղետալի հետևանքներ ունենալ: Նա նաև համաժողովի ուշադրությունը բևեռեց միկրոբների (մանրէների) դիմակայունության զարգացման հույժ կարևոր խնդրի վրա:

– Պարոն Գաբրիելյան, ինչո՞վ էր թելադրված կամ ինչո՞վ է բացատրվում նման հարցի քննարկումն ու միջազգայնացումը:

– Միկրոբային դիմակայունությունը այսօր լրջագույն պրոբլեմներից մեկն է, որ ծառացել է ոչ միայն բժշկության, այլև ողջ մարդկության առջև: Դեռևս 70 – 80-ական թվականներին բժշկությունը համարում էր, որ վերջնական հաղթանակ է տարել վարակիչ հիվանդությունների հարուցիչների նկատմամբ՝ բարձր արդյունավետությամբ օժտված հակաբիոտիկների ստեղծման շնորհիվ: Ասածս, անշուշտ, վերաբերում է զարգացած երկրներին:

Սակայն, ինչպես ասում են, շաբաթը ուրբաթից շուտ եկավ: Թույլ զարգացած և զարգացող երկրներում դեռ չէին հասցրել օգտվել այդ հակաբիոտիկներից, երբ բժշկության առջև ծառացավ նոր, նույնպես շատ կարևոր հակամիկրոբային դեղերի նկատմամբ դիմակայունության զարգացման խնդիրը: Այն դարձել է լրջագույն սպառնալիք և դամոկլյան սրի նման այսօր կախված է մարդկության գլխին՝ անկախ նրանից, թե որ աշխարհամասում ես, զարգացած, զարգացող, թե՞ թույլ զարգացած երկրում ես ապրում: Հենց այս երևույթի հետևանքով մեր ժամանակներում նորից գլուխ են բարձրացրել և համաշխարհային պրոբլեմ դարձել թոքախտը, մալարիան և այլ վտանգավոր վարակիչ հիվանդություններ:

Հակամիկրոբային դեղերի նկատմամբ դիմակայունության հիմքում ընկած են մի ամբողջ շարք գործոններ, որոնց դեմ պայքարի անհրաժեշտությունը արդեն անհետաձգելի օրակարգի հարց է դարձել: Այդ գործոնների թվում ես կուզեի ընդգծել հակաբիոտիկների օգտագործման ոչ ռացիոնալ, անփույթ և չմտածված կիրառումը ինչպես բժիշկների, այնպես էլ հիվանդների կողմից, այդ դեղերի օգնությամբ ինքնագլուխ ինքնաբուժությամբ տարվելը: Դրանց չմտածված, չհիմնավորված կիրառումը անասնաբուժության, անասնաբուծության, ձկնաբուծության և առհասարակ գյուղատնտեսության և սննդամթերքի արտադրության բոլոր ոլորտներում: Առավել անթույլատրելի և հանցավոր պետք է համարել հակաբիոտիկների լայն օգտագործումը կենդանիների քաշի և կաթնատվության բարձրացման նպատակով, գյուղատնտեսության մեջ՝ բերքատվության բարձրացման համար:

– Պարոն Գաբրիելյան, եկեք համաշխարհային ոլորտներից տեղափոխվենք մեր, չգիտեմ զարգացող, թե թույլ զարգացած երկիրը: Մենք գիտենք և անընդհատ խոսում ենք վարակիչ հիվանդությունների հարուցիչների տարածման վտանգի մասին: Սակայն վերջին տարիներին մեր կենցաղին բնորոշ դարձած, այսպես կոչված, փողոցային առևտուրը ուղղակի «հրաշալի» պարարտ հող է վարակների տարածման համար: Մայթերին, հողի վրա, կանաչների մեջ միս են ծախում, թռչուն և ձուկ, սննդամթերքի այլ տեսակներ:

– Ձեր հարցի մեջ նաև առկա է պատասխանը: Այն, ինչ կատարվում է սննդամթերքի իրացման ոլորտում, ոչ միայն անթույլատրելի է, այլև, չեմ վախենում այդպես բնութագրել՝ պարզապես հանցագործություն: Այդ բնագավառը պետք է լինի գործադիր իշխանությունների, նրանց համապատասխան ծառայությունների չթուլացող, խստագույն վերահսկողության ներքո: Եթե, իհարկե, մենք, մեր պետությունը իսկապես շահագրգռված ենք մեր ժողովրդի առողջության պահպանության համար: Հապաղելը, ուշացնելը, հղի են անդառնալի հետևանքներով:

– Եվ վերջին հարցը: Համաժողովի Հայտարարության դրույթներից ելնելով, ի՞նչն եք առաջնային համարում Հայաստանի համար:

– Մեր հանրապետության համար նույնպես կարևորագույն խնդիր է մանրէների դիմակայունության աճը հակաբիոտիկների նկատմամբ: Այս կապակցությամբ հանրապետությունում կատարված հետազոտությունների արդյունքները մենք ներկայացրինք համաժողովին: Մեր դեղերի գործակալության կողմից Առողջապահության համաշխարհային գործակալության հետ մենք տեղերում ուսուցողական սեմինարներ ենք կազմակերպում՝ կապված հակաբիոտիկների զարգացման խնդիրների հետ: Սակայն, միայն սրանով պրոբլեմը լուծել հնարավոր չէ: Ինչպես ասացի, անհրաժեշտ է խստագույն հսկողություն սահմանել ինչպես մթերքների որակի, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառում հակաբիոտիկների կիրառման նպատակահարմարության նկատմամբ:

Դադարեցնե՛լ, արգելե՛լ անտիբիոտիկների ազատ ու համատարած բացթողումը դեղատների կողմից, արմատավորել անտիբիոտիկների ավելի մտածված, չափավորված կիրառում: Սա վերաբերում է և բժիշկներին, և՛ ազգաբնակչությանը: Սա պետք է կրի հետևողական, համընդհանուր բնույթ:

Եվ վերջինը. պետք է կանոնակարգել կամ ընդհանրապես արգելել հակամիկրոբային անտիբիոտիկների հարձակողական գովազդը, որը հակասում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության և առհասարակ բժշկության սկզբունքներին:

«XXI ԴԱՐՈՒՄ ՎԱՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ»

ՄԻՋԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ (ՄԲՀ) ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՏԱՆԳ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Չնայած ինֆեկցիոն հիվանդությունների կանխման, ախտորոշման և բուժման բնագավառում ձեռք բերված մեծ նվաճումներին, վարակիչ հիվանդությունների հարուցիչների պատճառած տառապանքները էական բեռ են կազմում զարգացող և զարգացած երկրների հիվանդությունների տեսակարար կշռում: Թեև ՉԻԱՀ-ի կատաստրոֆիկ էպիդեմիան պահանջում է համընդհանուր ուշադրության ուժեղացում, գոյություն ունեն մի շարք այլ ինֆեկցիոն հիվանդություններ, ինչպիսիք են թոքախտը, մալարիան, դիզենտերիան, հեպատիտը, շնչառական ուղիների ինֆեկցիոն հիվանդությունները, որոնք ամբողջ աշխարհում շարունակում են սպանել և ախտահարել հարյուր միլիոնավոր երեխաների:

Դիմակայունությունը հակաբիոտիկների նկատմամբ աճում է, ինչը նվազեցնում և թուլացնում է արդյունավետ բուժումը: Վերջերս կենսաահաբեկիչների կողմից սիբիրյան խոցի հարուցիչների օգտագործումը, որպես մահացու զենք, ուշադրություն է հրավիրում ինֆեկցիոն հիվանդությունների մասին գիտության, որպես մարդասիրական գործելակերպի, այլասերման հանդեպ:

Սա իրական վիհ է, որը ստեղծվել է ամբողջ աշխարհում՝ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման և բուժման մասին եղած գիտելիքների և այդ գիտելիքների կիրառման միջև:



ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Հիմնախնդրի հանդեպ համակողմանի մոտեցման պահանջների այս կոչը հասցեագրվում է մասնագետներին, բժշկական ակադեմիաներին, գիտությունների ակադեմիաների բժշկական բաժանմունքներին, կառավարություններին, մասնավոր սեկտորին և միջազգային կազմակերպություններին:

Պետական առողջապահական գործակալությունները պետք է կատարելագործվեն ինֆեկցիոն հիվանդությունների հսկողության կազմակերպման գործում՝ տեղագրելով վարակիրների տարածման դինամիկան, հակամիկրոբային դիմակայունության և հիվանդության հետագա զարգացման ընթացքը: Պետությունները, ինչպես և միջազգային կազմակերպությունները պետք է կատարելագործվեն այդ նպատակներին հասնելու գործում: Հաջողությունը, ինչպես և ահաբեկչության դեպքում, ժամանակին տարվող պայքարն է նոր ինֆեկցիաների դեմ:

Դեղագործական ընկերությունները և պետությունները պետք է գտնեն մատչելի գներով դեղերի և վակցինաների առաջարկման ուղիներ՝ հասանելի ոչ միայն հարուստ, այլև աղքատ երկրների համար:

Պետություններում, ինչպես և միջազգային կազմակերպություններում, պետք է երաշխավորվեն առավել արդյունավետ դեղերի և վակցինաների օգտագործումը: Առավել կարևորվում է վակցինաների որակի կատարելագործման, պահպանության, տեղափոխման և կիրառման զուգակցումը, ինչը մեկ անգամ ևս ապացուցվեց կենսաահաբեկչության փաստով: Այս ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ է մասնագիտական կատարելագործում դեղաչափման, դեղային համատեղելիության և առավել արդյունավետ, համեմատաբար մատչելի մեթոդների օգտագործման գործում: Քանի որ, գիտական հետազոտությունները անհասու են թույլ զարգացած երկրների համար, ուստի ցածր կենսամակարդակով երկրների զարգացման հիմքը պետք է լինի համագործակցությունը զարգացած և զարգացող երկրների միջև: Հատուկ ֆինանսական ներդրումները և նախագծերի ցուցադրումը պետք է ուղղված լինեն բուժման մեթոդների կատարելագործմանը:

ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Դրված նպատակներին հասնելու համար գիտնականները, բժիշկները, մասնագետները պետք է ավելի ակտիվորեն ներգրավեն իրենց պետություններին, արհմիություններին և այլ հասարակական ու մասնավոր կազմակերպությունների գիտականորեն հիմնավորված, ֆինանսապես ծեռնտու առաջարկների ներկայացման գործընթացներին:

Այս ենթատեքստում լայն աջակցությունը համաժողովներին, առանձին գիտնականների, բժիշկների և մասնագետների անհատական և համատեղ գիտական ծրագրերին կխրախուսվեն ՄԲՀ-ի կողմից: Բոլոր երկրների ակադեմիաները պետք է գործադրեն համընդհանուր ջանքեր՝ կենսաանվտանգության ապահովման գործում և կասեցնեն ահաբեկչության նպատակներով բժշկական հետազոտությունների արդյունքների օգտագործումը:

ՄԲՀ-ի անդամները պետք է անհատական ծրագրեր նախապատրաստեն այս բնագավառում և միավորեն ջանքերը այլ միջազգային ակադեմիաների հետ՝ նշված նպատակներին հասնելու ուղիների նույնականացման համար:

Մենք ակնկալում ենք և ապավինում կենսաբժշկության բնագավառում աշխատող մասնագետների աջակցությունն ու համագործակցությունը:

ՄԱՀՎԱՆ ԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Պրոֆեսոր Ս.Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Փորձարարական ռեանիմատոլոգիան պարզաբանել է կենդանականից անկենդան վիճակին անցնելու ինքնատիպ գիտական որոշ փաստեր: Դրանք կապված են արտակարգ ցածր ջերմությունն օգտագործելու հետ:

1959 թվականին ֆրանսիացի գիտնական Լուի Ռեն հավի էմբրիոնի սիրտը սառեցրել է մինչև հեղուկ ազոտի ցածր ջերմությունը (– 196° C): Տաքացնելուց հետո սրտի ռիթմիկ աշխատանքը վերականգնվում է: Ինչպե՞ս բացատրել այդ հետաքրքիր երևույթը: Օրգանի ֆունկցիայի ոչ մի նշան չի հայտնաբերվել: Եվ դա զարմանալի չէ, քանի որ դժվար է պատկերացնել հյուսվածքում նյութերի փոխանակության ինչ-որ երևույթ այդքան ցածր (– 196° C) ջերմության պայմաններում: Հավանաբար այստեղ գաղտնիքը ֆունկցիայի ժամանակավոր-լրիվ վերացման մեջ է: Աստիճանաբար տաքացումից հետո սրտի ռիթմիկ աշխատանքը վերականգնվել է: Այս երևույթը պետք է դիտել որպես կազմավորված մատերիայի անցումն անկենդան վիճակից կենդանականին:

Կյանքի, մահվան և անմահության վերաբերյալ դատելիս շատ կարևոր է նրա բարոյագիտական փիլիսոփայական մոտեցումը: Կյանքի մեծ փիլիսոփա Ի.Վ.Գյոթեն գրում է՝ «Կյանքը բնության գեղեցիկ հայտնագործությունն է, իսկ մահը արհեստական միջոց, որպեսզի ունենալ շատ կյանքեր»: Մտածողության և հուզումների բարոյափիլիսոփայական հումանիտար սովորույթը, կապված մահվան և անմահության հետ՝ ծնվել է դեռևս հին ժամանակներում և ժամանակակից փիլիսոփայության մեջ առաջացրել տարբեր մեկնաբանություններ: Իհարկե, դրա մանրամասն պարզաբանման կարիքը չկա, հավանաբար այն հատուկ քննարկման խնդիր է: Սակայն մահվան և անմահության բարոյափիլիսոփայական հավերժ հիմնահարցերի հետ կապված անհրաժեշտ է թեկուզ համառոտակի կանգ առնել նրանց հումանիստական մեկնաբանումների վրա:

Եթե հարցին մոտենանք օնտոլոգիական (անհատական) և համընդհանուր տեսակետներից, ապա հին եգիպտական հավատքներում, առասպելաբանության, բուդդայականության մեջ, դաոիզմում, ինչպես նաև հին հունական փիլիսոփայական համակարգերում միշտ էլ եղել են մտքեր՝ «մահվան վախը հեռացնելու», «անդրշիրիմյան կյանքի» և «հոգու անմահության», ինչպես նաև «մատերիայի անսահման շրջապտույտի» վերաբերյալ:

Ստոիցիզմի որոշ ներկայացուցիչներ (էպիկտետ և այլք) մահվան հետ կապված բացասական զգացումները համարում են անմիտ, քանի որ եթե մահը տեղի է ունեցել, ապա հնարավոր չէ այն վերափոխել: Ըստ էպիկտետի, հիմարություն է մտածել հավերժ ապրելու մասին: Մարդը պետք է անի այնքան, ինչքան ի վիճակի է: Իսկ Կիկերոնի կարծիքով մահը չարիք և «հավերժ դժբախտություն» է: Նա գրում է՝ «Ինձ թվում է, ով հագեցել է ամեն ինչից, նա հագեցել է և կյանքից... և մահվան ժամանակը եկել է»:

Լ.Ֆոյերբախը խորհուրդ է տալիս՝ «Լավ բանը սպասեք ոչ թե մահից, այլ ինքներդ ձեզնից. ոչ թե մահը աշխարհից հեռացրեք, այլ հեռացրեք այն չարիքները, որոնք արմատավորված են մարդկանց մեջ (ծուլություն, ստորություն և տգիտություն...), որը ամենասարսափելին է: Բնական մահը, որը կյանքի ավարտի արդյունք է, չարիք չէ, բայց մահը, որը հետևանք է մարդկային որևէ արատի՝ հանցագործության, կոպտության, անդաստիարակության, իհարկե, չարիք է: Այդ մահը պետք է աշխարհից հեռացնել և հնարավոր չափով փորձել փոքրացնել նրա ազդեցության շրջանակները:

ախի կրեդոն: Նա գտնում է, որ «Բանականությունը դիմում է մարդուն», ի հակադրություն քրիստոնեության, որը, որպեսզի չեզոքացնի ենթադրական չարիքը, անձեռնմխելի է դարձնում կյանքի իսկական չարիքները:

Մահվան և անմահության փիլիսոփայական հարցերի վրա որոշակի ուշադրություն է դարձրել նաև մարքսիզմը: Նա դրանց փոխադրում է միայն մարդու անհատական-կենսաբանական գոյությունից դիալեկտիկական ամբողջականության ոլորտ, որտեղ նա միանում է մարդկային սոցիալական և հոգեկան գործոններին, ընդգրկելով նաև բարոյագիտական-հումանիստական հարցերը: Դրանից ելնելով, Մարքսը գտնում է, որ «Մահը մարդկային ցեղի հաղթանակն է որոշակի անհատի նկատմամբ և որպես այդպիսին նա մահկանացու է»: Մահվան և անմահության հիմնահարցը դիտվում է որպես անհատի և մարդկային հասարակության հակադրում: Չնայած անհատը մահանում է, բայց նա մարդկային ցեղում անցնում է ժառանգության անմահության, ինչպես նյութական, այնպես էլ հոգեկան առումով:

Մահվան և անմահության հիմնահարցում գոյություն ունի նաև այլ, անհատական անմահացում: Նրա մեջ ի հայտ է գալիս ողբերգություն, որը չի կարող վերացնել ոչ մի, նույնիսկ ամենաօպտիմիստական փիլիսոփայությունը: Հիշենք Ա.Ս.Պուշկինին, երբ բանաստեղծի անձին միանում են մտքեր՝

"Но не хочу, о други умирать.
Я жить хочу, чтобы мыслить и страдать".

Կյանքը կարևոր է որպես հոգեկան մտածողության և տառապանքի ամբողջականություն: Բայց մեզ այստեղ հետաքրքրում է այլ մոտեցում՝ մահանալ, որպեսզի ուրիշներին ճանապարհ տալ, որպեսզի կյանքի լինի հավիտենական, անհրաժեշտություն և արդարացի:

Սա ընդգծված ի հայտ է եկել նաև ռուսական պատմության մեջ: Կապված բարոյա-փիլիսոփայական հարցերի հետ, այն լավագույն ձևով ներկայացրել է Լ.Ն.Տոլստոյը: Չնայած նրա մոտեցման հիմքուն ընկած են կրոնական-իդեալիստական մտքեր, սակայն փաստորեն նրա գեղարվեստական ստեղծագործությունները հակադրվել են օրթոդոքսալ քրիստոնեական և մահվան ու «հարության» այլ պատկերացումներին: Սա է պատճառը, որ մահվան և անմահության հարցերում մեծ ազդեցություն է ունեցել մարդու բարոյագիտական մոտեցումները, ինչպես նաև այն, որ այդ հարցում մեծ հետաքրքրություն են ցուցաբերում տարբեր փիլիսոփայական ողղություններ, այդ թվում նաև մատերիալիստական: Լ.Ն.Տոլստոյը գրում է, որ «ես կմահանամ, ինչպես բոլորը, բայց իմ կյանքը և մահը կունենան մեծ իմաստ և՛ ինձ, և՛ բոլորի համար»: Նա գտնում է, որ «մարդը մահանում է, բայց աշխարհի նկատմամբ նրա վերաբերմունքը շարունակում է ազդել մարդկանց վրա, նույնիսկ ոչ այն չափով, ինչպես կյանքում, այլ շատ անգամ ավելի ուժեղ»: Նրա համար փիլիսոփայական եզրակացությունները, որոնք վերաբերում են մարդու մահվանը և անմահությանը, այդ հիմնահարցերի գեղարվեստական մեկնաբանման հետևանքն են: Դրանք Լ.Ն.Տոլստոյը հանճարեղորեն ներկայացրել է հատկապես «Պատերազմ և խաղաղություն» և «Իվան Իլիչի մահը» ստեղծագործություններում: Հիշենք, թե ծանր վիրավորվելուց հետո ինչպես է կյանքից անցնում մահվանը Անդրեյ Բոլկոնսկին. «Երբ նրա վրա կար միայն անհասանելի բարձր երկինքը, որին նա չէր տեսել նախկինում և երջանիկ էր ճանաչել նրան: Նրա համար ոչնչություն էին ամեն ինչ այդ բարի, բարձր և արդար երկնքի առջև»:

Կյանքի և անմահության հարցերը լայնորեն շոշափվել են նաև Ֆ.Մ.Դոստոևսկու վեպերում «Ոճիր և պատիժ», «Կարամազով եղբայրներ»: Չնայած տվյալ հասկացության մեջ բազմաթիվ յուրահատկություններին, մարդու մահվան և անմահության հիմնահարցերում կարծես թե միանում են անցյալը և ներկան, մի կողմից ժառանգելով հումանիտար պատմափիլիսոփայական սովորույթները, մյուս կողմից դրդելով ժամանակակից փիլիսոփայական մտածողությունը, հոգեկան-բարոյագիտական ապրումները՝ կապված տվյալ հիմնահարցերի հետ:

Այստեղ ուղղակիորեն երևում է Լ.Ֆոյերբ

Ծերության հետաձգման նպատակով մարդու մահվան և անմահության հարցերը ներկայացված են չեխ գրող Կ.Չապեկի մենագրության մեջ, կապված մարդու օրգանիզմի վրա «մակրոպոլիս» պատրաստուկի ազդեցության հետ: Ըստ հեղինակի, պատրաստուկի օգտագործման ժամանակ կյանքի տևողությունը երկարում է մինչև 500 տարի: Նման պայմաններում հեղինակը նկարագրում է կենսական պրոցեսների, նյութափոխանակության նկատելի ակտիվացում: Սակայն ի հայտ է գալիս նաև հարցի մեկ այլ կողմը՝ կյանքը դառնում է անհետաքրքիր, ծանձրալի, միատեսակ և այլն: Կ.Չապեկը գալիս է այն եզրակացության, որ նման պայմաններով կյանքը երկարացնելն անիմաստ է:

Ներկայումս մարդու մահվան և անմահության հիմնահարցերում ի հայտ է եկել այդ հարցի ևս մեկ կողմ՝ ինչպիսին է մարդու կյանքը մահից հետո: Վերջին տարիներին ԱՄՆ-ում լույս է ընծայվել հոգեբույժ և փիլիսոփա Ռեյմոնդ Մուդիի «Կյանքը մահից հետո» խորագրով մենագրությունը: Նա, ամփոփելով 150 մահացած և վերակենդանացած մարդկանց, նշում է, որ մահացման պրոցեսում մարդը լսում է տհաճ աղմուկ, բարձր ձայն, այնուհետև շարժվում է առաջ երկար թունելով, որի վերջնամասում ի հայտ է գալիս լույսը և հանկարծ զգացվում է մարմնի փեղեքում, և ինքը իրեն տեսնում է կողքից: Նրան դիմավորում են ինչ-որ բարի դրացիական մարդիկ, որոնց մեջ նա ճանաչում է մահացած ազգականներին և մտերիմներին: Այնուհետև լույսի մեջ ի հայտ է գալիս բարի, սիրալիր հոգի, որին մահացողը երբեք չէր հանդիպել: Մարդն անսպասելիորեն նկատում է, որ ինքը մոտենում է պատին և մտածում է, որ դա երկրային և անդշիրիմյան կյանքի միջև սահմանն է: Սակայն անցնել այդ սահմանը չի հաջողվում: Նա զգում է, որ պետք է հետ դառնա, որ իր մահանալու ժամանակը դեռ չի եկել: Թվում է, զարմանալին 150 պատմություններն են մահվան եզրից, անդրշիրիմյան կյանքից, որոնք հաստատում են ետմահացման վիճակը, և որոնք շատ դարեր քարոզել են քրիստոնեությունը, բուդդիզմը, իսլամը... Սակայն չենք շտապի եզրակացություններ անել: Նշենք, որ գրքի հեղինակը մեծ աղմուկ բարձրացնելով, գտնում է, որ ոչ մի փաստ չի եղել, որը հաղորդվեր այնտեղից, որտեղից չեն վերադառնում: Ռ.Մուդիի գրքում բերված մարդկանց վկայությունները կրոնական ներկայացումներով են: Սա խոսում է կրոնի ուժեղ ազդեցության մասին, որն արտահայտվում է նույնիսկ ամենածանր վիճակներում: Բայց եղել են ժամանակներ, երբ անդրշիրիմյան կյանքի գաղափարն ավելի մեծ ազդեցություն է թողել մարդկանց գիտակցության վրա: Դարերի ընթացքում տարբեր կրոններ քարոզողները տարածել են անդրշիրիմյան կյանքի, դրախտի գաղափարը, իսկ մեղք գործելու համար՝ անվերջ տանջանքներ: Այսպես, եթե մենք նայում ենք ուղղափառ կրոնին, ապա քրիստոնեության գլխավոր 12 ուղղություններից 2-ը նվիրված են անդրշիրիմյան կյանքին: Բուդդայական կրոնավորները իրենց հետևորդներին վախեցնում են անհավատալի տանջանքներով դժոխքում և խոստանում են տարբեր հաճույքներ բուդդայական դրախտում: Նման դրախտի և դժոխքի մասին է խոսում նաև Իսլամը:

Մահացման պրոցեսում ընկճվում է գանգուղեղի կեղևի ֆունկցիան, այդ թվում նաև քունքային և քիմքա-ծոծրակային մասերում, որոնց ընկալումը բավական երկար է պահպանվում: Սա է պատճառը, որ մահացող և ապա վերակենդանացված մարդը կարող է պատմել բժիշկների խոսակցությունը, բայց չի կարող նրանց պատասխանել: Այստեղ գլխավորը ոչ թե կյանքի արտահայտությունն է, այլ օրգանիզմի մահացման և վերակենդանացման պրոցեսների մնացորդների անկայունության արտահայտությունը: Այս դեպքում խանգարվում է տարածական կողմնորոշումը և առաջանում է «Երկվորյակի ախտանիշը»: Մարդուն թվում է, թե կիսվել է, դարձել է կրկնակի և իրեն տեսնում է կողքից: Առանց որևէ միստիկայի և իդեալիզմի դա հայտնի է որպես դեպերսոնալիզացիայի երևույթ, երբ հիվանդին թվում է, թե նա ինքն է, և ինքը չէ, որ գոյություն ունի նրա ռեալ կրկնօրինակը: Նման երևույթ լինում է նաև որոշ հոգեկան հիվանդությունների ժամանակ: Այդ մասին իր «Դիեպերսոնալիզացիա» մենագրության մեջ խորը բացատրություն է տալիս պրոֆեսոր Ա.Հ.Մեհրաբյանը:

Այսպիսով, հալուցինացիաները և երևույթները, որոնք հանդիպում են կյանքի և մահվան շեմին, երբեք էլ չեն վկայում անդրշիրիմյան կյանքի մասին: Հետազոտությունները պարզել են այդ ֆենոմենների ֆիզիոլոգիական մեխանիզմները: Գիտնականները գտնում են, որ երևույթները, որոնք առաջանում են կլինիկական մահվան ժամանակ, կապված են ազգային կուլտուրայի, այս կամ այն կրոնի հետ՝ հնդիկների մեծ մասը տեսնում է իրենց կրոնական պատկերները: Ոչ մի քրիստոնյա չի տեսնում հնդկական աստվածներին, ոչ մի հնդիկի չի ներկայացել Հիսուս Քրիստոսը:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ վերակենդանացած մարդկանց մեծ մասը մահացման պրոցեսը և վերակենդանացումը ընկալել են որպես խորը քուն, առանց որևէ երազների: Ռեանիմացիայում այդ տարածված երևույթը իհարկե չի ծառայել իդեալիզմին և ոչ մի հիմք չի տալիս խոսել կյանքի մյուս կողմի մասին:

Կյանքը մահից հետո բացատրող տարբեր տեսակետներն իրենց հիմքում որևէ գիտական հիմքեր չունեն: Ավելի շուտ նրանք ցուցադրական «ապացույցներ» են իդեալիզմի դրույթները ներկայացնելու համար, քանի որ իդեալիզմը ոչ մի հիմք չունի «այն կողմի կյանքի» մասին խոսելու համար:

Հայ փիլիսոփայական միտքը վաղուց է որոշել մահվան հարցը որպես կյանքի բնական ավարտ: Նա լուծել է նաև անմահությանը վերաբերող հարցերը՝ մահից հետո մարդը մնում է կենդանի իր ստեղծագործությունների մեջ, կատարած գործերով: Այդպիսի մարդիկ, որոնք նվիրվել են մարդկությանը, չեն մահանում: Այդ տեսակետից դիպուկ է Եղիշեի արտահայտությունը, «Մահ չիմացյալ՝ մահ է, մահն իմացյալ՝ անմահություն»:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ, ՆԿԱՐԻՉԸ, ԲԺԻՇԿԸ

Հալեպի Վիոլետ Ճեպեճյան գրադարանի հրատարակությամբ լույս է տեսել սփյուռքահայ ճանաչված հասարակական գործիչ, ակնաբույժ, դոկտոր Ռոբերտ Ճեպեճյանի «Ինքնակենսագրություն. հուշեր և գործունեություն» ժողովածուն: Այն մեծավաստակ արվեստագետի, հասարակական գործչի և ակնաբույժի հուշերն են, որոնք ընթերցողին են ներկայացնում ոչ միայն իր ու իր գերդաստանի կենսագրությունը, այլև սիրիահայ գաղութի, մասնավորապես հալեպահայության կյանքի մի մեծ դրվագ: Ստորև հրապարակում ենք գրքի առաջաբանը, որի հեղինակն է պատմական գիտությունների դոկտոր, Մատենադարանի փոխտնօրեն Վարդան Գրիգորյանը:

Ընթերցողների դատին է հանձնվում սիրիահայ նշանավոր բժիշկ և հասարակական գործիչ Ռոբերտ Ճեպեճյանի հուշերի գիրքը: Հեղինակի անունը, նրա բազմաթիվ գրքերը, հոդվածները, հրապարակումները քաջ ծանոթ են թե՛ սփյուռքի և թե՛ Հայաստանի ընթերցող հասարակայնությանը: Չկա հասարակական կյանքի մի ասպարեզ, որի նկատմամբ անտարբեր գտնված լինի մեր հեղինակը: Նա սոսկ գրող կամ հրապարակագիր չէ, դեպքերը հեռվից դիտող, գրանցող կամ նկարագրող անձ, այլ կարևոր, երբեմն էլ բախտորոշ իրադարձությունների, եղելությունների ամենաեռանդուն մասնակից ու հաճախ էլ՝ կազմակերպիչ:

Ռոբերտ Ճեպեճյանը գրիչ է վերցրել ոչ թե գրական հակումներին հագուրդ տալու, այլ անհապաղ լուծում պահանջող զանազան հարցեր ու խնդիրներ առաջ քաշելու ազնիվ մտահոգությամբ: Նա պատկանում է այն հազվագյուտ մարդկանց ու գործիչների թվին, որոնց մոտ խոսքը և գործը միմյանցից երբեք անջրպետված չեն եղել: Նա աշխատել է կազմակերպել, ստեղծագործել, հետո այդ կապակցությամբ հրապարակ եկել՝ առաջ քաշելով նորանոր առաջավոր գաղափարներ, ծրագրեր, առաջադրանքներ:

Ռ.Ճեպեճյանի հուշերը մեզ տանում են մե՛րթ Կիլիկիա՝ իր ծննդավայրը, մե՛րթ Սիրիա, Լիբանան, Եվրոպական երկրներ, մե՛րթ էլ Հայաստան, որի անկաշառ ու խանդավառ բարեկամն է եղել տասնամյակներ շարունակ:

Ռ.Ճեպեճյանը ճանաչված ու սիրված մարդ է եղել Մայր Հայրենիքում: Նա ապրել է հայրենիքի հոգսերով: Մեր հաջողություններն ու նվաճումները, ցավերն ու վերքերը նաև նրանն են եղել, և նա մշտապես ձգտել է իր կարելիության սահմաններում օգտակար լինել հայրենի երկրին, նրա քանգարաններին, գրադարաններին, գիտական օջախներին ու հատկապես բժշկական հաստատություններին:

Անուրանալի է նրա մեծ վաստակը հայարաբական բարեկամության զարգացման ու ամրապնդման գործում: Նա վիթխարի աշխատանքներ է իրականացրել ոչ միայն հայ գաղթականների ու նրանց սերունդների, այլև արաբ ժողովրդի առողջապահության գործը պատշաճ բարձրության հասցնելու ուղղությամբ: Նա ստեղծել է ակնաբուժության հիմնարկներ, ընկերություններ, կույրերի դպրոց, պատրաստել համապատասխան մասնագետ կադրեր: Ակնաբուժության ասպարեզում նրա ծանրակշիռ վաստակը երախտագիտությամբ է ընդունվել ու գնահատվել արաբ գիտական ու կառավարական շրջանակների կողմից և իրավամբ դասվել զարգացող սիրիական երկրի նվաճումների շարքում: Նրա գործունեությունը այս ասպարեզում մշտապես պատիվ է բերել հայ ժողովրդին: Բավական է ասել, որ նա քառորդ դար շարունակ եղել է Սիրիայի մասնագետ ներկայացուցիչը Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Ռ.Ճեպեճյանը ամենևին չհրապուրվեց ոչ հեռու անցյալում հայրենիքի մեջ կատարվող երևույթական փոփոխությունների հեռանկարներով: Իսկական հայրենասերի սկզբունքային դիրքերից նա համարձակորեն արտահայտեց իր վերաբերմունքը և կարողացավ ճշտորեն գնահատել ստեղծված բարդ կացությունը: Նա եղավ՝ մեր ժողովրդի հետ թե՛ նրա զարգացման ու առաջընթացի տարիներին և թե՛ այն ծանր ժամանակներում:

Ռ.Ճեպեճյանը, սակայն, լավատես է ու վստահ, որ հայրենի երկիրը, նրա աշխատասեր ու շնորհալի զավակները՝ գալիք ղեկավարների առաջնորդությամբ, կկարողանան վերականգնել ավերվածը ու նոր թափ կհաղորդեն հայրենիքի զարգացմանը՝ կյանքի բոլոր բնագավառներում:

Ռոբերտ Ճեպեճյանն իր բազմաթիվ հրատարակություններով վիթխարի գործ է կատարել սիրիահայոց անցյալ կյանքի բազմաթիվ էջեր մոռացությունից փրկելու և պատմության սեփականություն դարձնելու ուղղությամբ: Նրա հուշերը նույն նպատակն են հետապնդում, և վստահ ենք, որ սերունդները երախտապարտ կլինեն նրան՝ այդ կարևոր ու անհետաձգելի գործն իրականացնելու համար:

Վարդան ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, Մաշտոցի անվան Մատենադարանի փոխտնօրեն

Ռ.Ճեպեճյան. գործ՝ Արտո Չաքմաքչյանի

Ի՞ՆՉ է ՊԱՀՎԱԾ ԿԱՏԱԿՈՄԲՆԵՐՈՒՄ

Եվրոպական շատ քաղաքներ մինչև օրս պահպանում են հինավուրց ժամանակների գաղտնիքներ: Ասում են, որ Փարիզի հնօրյա կատակոմբներում մինչև հիմա դեռ թաքցրած են Թամփլիերների օրդենի գանձերը: Գետնի տակ տանող մուտքերից մեկը գտնվում է ֆրանսիական մայրաքաղաքի հենց կենտրոնում՝ Փարիզի Աստվածամոր տաճարի տարածքում: Ի՞նչ կարգի գանձեր են թաքցրած կատակոմբներում՝ անհայտ է: Գուցե՞ թանկարժեք քարեր կամ ծուլածո ոսկի: Որոշ գիտնականների կարծիքով էլ դրանք կարող են լինել այն հինավուրց մագաղաթները, որոնք պատմում են նախապատմական Ատլանտիդայի ասքի և կործանման մասին: Չէ՞ որ իրապես հայտնի է, որ խաչակրաց արշավանքների ժամանակ թամփլիերներին հաջողվել է մուսուլմանների ձեռքից խլել այդ մագաղաթները:

Այն ժամանակներում վերծանել այդ մագաղաթները անհնար էր: Սակայն, հնարավոր է, որ այսօրվա գիտնականները վերջապես կարողանան կարդալ դրանք և հաղորդակից դառնալ այն գաղտնիքներին, որոնց տիրապետում էին ատլանտները նախապատմական ժամանակներում:

ՀՅՈՒՐԵՐ ԱՅԼ ՄՈԼՈՐԱԿՆԵՐԻՑ

Դեռ միջնադարից Բազելում (Շվեյցարիա) խորհրդավոր փաստաթղթեր են պահպանվում 16-րդ դարում այս կողմերն այցելած այլմոլորակայինների մասին: Ականատեսների բազմաթիվ վկայություններ են հավաքվել, որոնք սեփական աչքերով տեսել են, թե ինչպես քաղաքի գլխին կարծես միաժամանակ հայտնվել են «երեք լուսիններ»: Դրանք բոլորը մեծ արագությամբ սլացել են արևմուտքից արևելք և ապա հանկարծ սկսել են ցած իջնել: Վայրէջք կատարելով քաղաքից ոչ հեռու, այդ տարօրինակ սկավառակները միաժամանակ կանգնած են մնացել երկրի վրա, ապա բարձրացել երկինք և թռել-անհետացել:

Ասում են, որ շատ տետրակներ, որոնք պատմում են այս զարմանալի իրադարձության մասին, թաքցված են տեղի մենաստաններից մեկում: Առ այսօր դրանք հայտնաբերելու փորձերը անցել են ապարդյուն, սակայն պատմաբանները դեռևս հույսերը չեն կորցրել: Սակայն նկարները, որոնց վրա պատկերված են թռչող ափսեներ, քաջ հայտնի են: Դրանք պահպանվում են Բազելի պատմական թանգարաններից մեկում:

ՄՈՌԱՑՎԱԾ ԷՋԵՐ

Փարիզում Հակոբ Նեվրուզի (1864 – 1947) խմբագրությամբ լույս տեսնող «Հայաստանի ձայն» շաբաթաթերթի 1922թ. դեկտեմբերի 30 (N 24) համարում Վ.Տերյանի, Արմ. Տիգրանյանի, Ե.Չարենցի հայրենասիրական բանաստեղծությունների հետ, իբրև մի փունջ, տպագրվել է Հովհ. Թումանյանի հետևյալ քառյակը.

Եթե նույնիսկ ամենքի հետ ինձ էլ
դժգոհ՝ Դու լքես –
Ես Քեզ հետ եմ ուր էլ գնաս, Դու չես
կարող ինձ ձգես,
Ես Քո մեջ եմ, Դու՝ ամենքի, ամեն ժամ
ու ժամանակ...
Բայց... ամենքն էլ անօգնական միշտ
փնտրում են նորից քեզ:

Սույն քառյակը տեղ չի գտել Ե.Չարենցի խմբագրությամբ Մեծ բանաստեղծի 1934թ. երկերի ժողովածուի, քառահատորի և վերջին՝ տասհատորյակի մեջ:

1922թ. վերջերին Բանաստեղծի առողջությունը օրավուր վատթարանում է: Նրան տեղափոխում են Թիֆլիսից Մոսկվա: Հայությունը՝ սփյուռքում ու հայրենիքում, հետևում էր սիրելի Բանաստեղծի առողջական վիճակին: «Հայաստանի ձայնը» 1923թ. փետրվարի 17-ի համարում ընթերցողներին տեղեկացնում է Բանաստեղծի անբուժելի հիվանդության սրման մասին: Իսկ նույն թվի մարտի 24-ի համարում «Վ.Ա.» (հավանաբար՝ Վարդգես Սիարոնյան – Ա.Ղ.) ստորագրությամբ լույս է տեսնում «Ա.Չոպանյանի բանախոսությունը» նյութը, որում հեղինակը հայտնում է իր դժգոհությունը Փարիզի Մյուզե Սոսիալ սրահում տեղի ունեցած Հովհ. Թումանյանի մասին Ա.Չոպանյանի զեկուցման վերաբերյալ: Նշելով բանաստեղծի արժանիքները, որին ծանոթ է Ա.Չոպանյանը «...Այդ Թումանյանը պ.Չոպանյանի բանախոսության մեջ չցուցադրվեց», – գրում է Վ.Ա.

Իսկ ահա 31 մարտի 1923թ. համարի «Երեք մահ» խորագրով հրապարակման մեջ ցավ ու խոր ափսոսանք է հայտնվում հայ ժողովրդի երեք երևելի անհատների. բանաստեղծ Հովհ. Թումանյանի (1869 – 1923), հեղափոխական ու պետական գործիչ Արմեն Գարոյի – Գարեգին Փաստրմաջյանի (1873 – 1923), «Խոհական իմացականության մարմնացում», Մոսկվայի Հայկական կոմիտեի նախագահ Ստեփան Մամիկոնյանի (1859 – 1922) մահվան առթիվ:

Խմբագրականն ընդգծում է մի հանգամանք. երեքն էլ վախճանվել են օտար ափերում, հայրենիքի կարոտը սրտերում:

Նույն համարում «Հովհաննես Թումանյան» վերնագրով լույս է տեսնում Վարդգես Սիարոնյանի արժեքավոր ու ուշագրավ բնութագրական հոդվածը:

Ալվարդ ՂԱԶԻՅԱՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ.
Կոլումբիայի համալսարան

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ԹԵՐԹԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՈՎԱՆԱՎՈՐՉԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐՈՎ:
ԹԵՐԹԻ ԱՅՍ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ՀԱՄԱՐՆԵՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐԻ ԵՎ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅԱՄԲ: ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈ՞ՒՆ...

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան – 19, Մարշալ Բաղրամյան 24դ, հեռախոս՝ 56-80-14:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 8.05.2002թ.
"ГИТУТЮН" ("Наука") – газета НАН РА